UC SOUTHERN REGIONAL LIBRARY FACILITY
AX000160595 5

alifornia
gional
ility

Digitized by Google

Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

Generated on 2016-07-15 08:32 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Vartan Derad

Digitized by Google
Original from
UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 08:47 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

~~#69~~
69



Digitized by Google
Original from
UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 08:47 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Generated on 2016-07-15 10:26 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

Թիւ 8 Հրատարակութիւն Ս. Դ. Հնչ. Կոս. Ամէր. Գրչ. Ցանց.-ի

ՆՈՐԱԳՈՅՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ

ԳՐԵՑ

Ե. ՍԱՖՕ

(Ս. ՄՈՒՐԱՏԵԱՆ)

ՊՐՕՎԻՏԷՆՍ

Տպարան «ԵՐԻՑԱՍԱՐԴ ՇԱՑԱՍՏԱՆ»ի

1914

Generated on 2016-07-15 10:27 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Generated on 2016-07-15 10:27 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ներկայ բրոշիւրով մեր նպատակն է ընթերցող հասարակութեան ցոյց տալ նորագոյն սահմանադրական իրաւունքի մի շարք սկզբունքները, որոնք արդեն կիրարկուած են եւ կամ կիրարկելու վրայ են Արեւմտեան Եւրոպայի եւ Ամերիկայի հասարակութիւնների մէջ:

Դժբաղդաբար, մեր մէջ շատ քիչերը ծանօթ են քաղաքական-սահմանադրական հարցերին եւ դա գլխաւորապէս բացատրւում է այն իրողութեամբ, որ մեզ շրջապատող քաղաքական, տնտեսական կաշկանդող միջավայրը հնարաւորութիւն չէ տուել ուսումնասիրելու: Մամուլի էջերում, հրապարակային ժողովներում ամեն օր խօսւում է պետութեան, ազգի, կառավարութեան, սահմանադրութեան, պարլամենտի, քւէի իրաւունքի, քաղաքական-քաղաքացիական ազատութիւնների մասին եւ, սակայն, շատերը դեռ որոշ, մեկին, յստակ գաղափար չունեն քաղաքական այդ հասատատութիւնների մասին:

Ամերիկահայ գաղութը, գլխաւորապէս, մինչեւ այսօր զուրկ է եղել այդ հարցերի շուրջ բանաւորութիւնից: Նա շատ քիչ անգամ պատեհութիւն է ունեցել կարդալ կամ լսել քաղաքական-օրինական բնաւորութիւն ու իմաստ ունեցող շուրջ զրուցներ ու ատենախօսութիւններ: Ազգայնական դեմագոգիան հակառակ է եղել միշտ այդ կարգի հարցեր շօշափելուն եւ աշխատել է, որքան կարելի է, շահագործել ժողովրդի փափուկ զգացումները:

Ամեն մի ժողովուրդ, եւս աւելի հայ ժողո-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:27 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

վուրդը, իր ազգային, քաղաքական եւ քաղաքացիական իրաւունքների պաշտպանութեան տեսակէտից պէտք է ուսումնասիրէ սահմանադրական–քաղաքական հարցերը եւ առհասարակ այն սկզբունքները, որոնց վրայ հիմնուած են Եւրոպայի եւ Ամերիկայի քաղաքական կազմակերպութիւնները: Նա պէտք է անհրաժեշտօրէն գիտակցութիւն ունենայ իր իրաւունքների ու պարտականութեանց մասին, որպէսզի կարողանայ աւելի յաղթականօրէն պայքարել բռնապետութեան, խեղճութեան ու հարստահարութեան դէմ:

Այդի առաջ ունենալով, ուրեմն, սահմանադրական–քաղաքական հարցերի եզական կարեւորութիւնը, մենք ցոյս ենք ընծայում ներկայ բրոշիւրը, որ հրատարակուած է 1909 թիւին, Կ. Պոլսում «Կոհակ» շաբաթաթերթի մէջ, Ս. Մուրատեան ստորագրութեամբ: Ինչ–ինչ մասերում մենք յաւելումներ ենք արել, արծարծուած խնդիրները աւելի որոշ կերպով շուսաբանելու համար:

Ե. ՍԱՂՕ

Generated on 2016-07-15 10:27 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

ՆՈՐԱԳՈՅՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ

Ի՞նչ է պետութիւնը,—Սոցիալիստական եւ բուրժուական տեսակէտները նրա մասին.— Ազգութիւն եւ Միջազգայնութիւն.—Պետութեան ձեւերը.—Ի՞նչ է կառավարութիւնը, կառավարութեան ձեւերը.— Ի՞նչ է սահմանադրութիւնը, սահմանադրական շարժումները.— Նորագոյն սահմանադրական իրաւունքի մի քանի հիմնական սկզբունքները.— Ժողովրդական միահեծանութիւն, գաղտնի, ուղղակի, ընդհանուր եւ հաւասար ձայնատուութեան եղանակ, համեմատական ներկայացուցչութիւն, ժողովրդական վերհսկողութիւն.— Իշխանութիւնների բաժանումն, Օրենսդիր, գործադիր եւ դատաստանական Իշխանութիւններ.— Քաղաքական-քաղաքացիական ազատութիւններ:

Ի՞նչ է պետութիւնը.— Պետութեան մասին ներկայումս տիրապետում են երկու որոշ և առանձին տեսակէտներ, մէկը սոցիալիստական իսկ միւսը բուրժուա-ազատամտական։

Սոցիալիզմի տեսակէտով պետութիւնը ընկերային այն ոյժն է, որ ծնունդ լինելով մասնաւոր սեփականատիրութեան, նպատակ ունի պահպանել դասակարգային բաժանումները։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:27 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Այն օրից, երբ արտադրութեան և հարստութեան գործիքները մասնաւոր սեփականութիւն դարձան մարդկանց մի խմբի, դասակարգութեան, այդ օրից ծնունդ առաւ պետութիւնը։ Ընկերային այդ առանձնաշնորհեալ դասակարգը ստեղծեց պետութիւնը որպէս քաղաքական և ոստիկանական կազմակերպութիւն, որի միջոցով նա ձգտեց ապահովել իր դասակարգային տիրապետութիւնը այն դասակարգի վրայ, որ անմասն մնաց ընկերային հարստութիւնից։ Եւ եթէ մենք մի ակնարկ նետենք պատմութեան վրայ, կը տեսնենք, որ պետութիւնը իր ծագման օրից մինչև այսօր պաշտպանել է հարուստ, սեփականատէր դասակարգի շահերը ընդդէմ աղքատ, ընչազուրկ դասակարգի։ Հին Աթէնքի և Հռոմի մէջ, պետութիւնը կազմուած էր այն ժամանակուայ սեփականատէր դասակարգից, աղնուականութիւնից և պաշտպանում էր նրա շահերը ընդդէմ սեփականազուրկ դասակարգի, որ գերիներն էին։ Աթէնքում սեփականատէր դասակարգը կազմում էին հoպաsրիդները, իսկ սեփականազուրկ դասակարգը՝ գհoլoրները և դեմիուրգները։ Հռոմում պաsրիկեաններն էին սեփականատէր դասակարգը իսկ պլեբեեանները՝ սեփականազուրկ դասակարգը։

Միջին դարում պետութիւնը կազմուած էր աւատապետներից և պաշտպանում էր նրանց շահերը ընդդէմ ճորտերի։ Իսկ ներկայ դարում, պետութիւնը իր ամբողջ օրէնսդրական, դատական և զինուորական կազմով պաշտպանում է բուրժուա դասակարգի շահերը ընդդէմ պրoլեsաr, բանւոր դասակարգի։

Եւ որովհետև պետութիւնը ծնունդ լինելով մասնաւոր սեփականատիրութեան, սկզբից ի վեր

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:28 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

պաշտօն է ունեցել պահել դասակարգային առանձնաշնորհումները, ուստի սոցիալիստների կարծիքով, պետութիւնը պիտի վերանայ, անհետանայ այն օրը, երբ արդի տնտեսական անհաւասարութեան ու անարդարութեան ռէժիմին յաջորդէ ընկերային հաւասարութեան ու եղբայրութեան իրաւակարգը, ուր բնութեան բոլոր բարիքները ընդհանուրի սեփականութիւնը դառնալով՝ պիտի իրականանայ մեծ փիլիսոփայի այն իդէալը թէ՝ մէկը ամենքի համար է և ամենքը մէկի համար։ Սոցիալիստական տեսակէտով, ուրեմն, երբ արդի մասնաւոր սեփականատիրութիւնը և դասակարգային բաժանումները վերանան ու թագաւորէ համայնական սեփականատիրութիւնը և ընկերային գործակցութեան ռէժիմը, այդ օրը պետութիւնը՝ որպէս քաղաքական և տնտեսական տիրապետութեան մի գործիք՝ պիտի վերանայ իր կարգին և դառնայ միայն թանգարանների մի զարդ, ինչպէս ասում է սոցիալիզմի հայրերից մէկը՝ Ֆրէդրիխ Էնգէլսը (1)։

Բուրժուա-ազատամտական տեսակէտով, պետութիւնը մի երկրի մէջ ապրող ազգի կամ ազգերի

---

(1) Տես Ֆրէդրիխ Էնգէլս՝ L' Origine de la propriete, de la Famille et de l'Etat. Ապագայ սոցիալիստական իրաւակարգի մէջ պետութիւնը գոյութիւն կունենայ, բայց այդ պետութիւնը արդի քաղաքական կազմակերպութիւնը չի լինիլ, որը ինչպէս ասացինք, սոցիալիստների կարծիքով պիտի անհետանայ, այլ տնտեսական մի վարչութիւն, որ աշխատանքը պիտի բաժանէ ընկերութեան անդամների միջև և ապահովէ արտադրոյթների արդար բաշխումը։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:28 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կողմից կազմված քաղաքական ընկերակցութիւնն է, ուրիշ խօքով՝ նա իրաւական անձնաւորումն է նոյն երկրի ազգի կամ ազգերի։

Պետութեան նպատակի և առաքելութեան վասին զանազան փիլիսոփաներ զանազան կարծիքներ են տուել, նայելով թէ՝ որ ուղղութեան են պատկանում իրանք։ Կանտի, Ֆիխտէի, Հումբոլդի, Մակօլէի կարծիքով՝ պետութեան նպատակն է երաշխաւորել անհատի իրաւունքները։ Դա անհատապաշտական (individualiste) դպրոցի տեսակէտն է։ Բլունչլիի կարծիքով՝ պետութեան «ճշմարիտ և ուղղակի նպատակն է ազգի կարողութիւնների զարգացումը, նրա կեանքի կատարելագործումը յառաջատուական մի այնպիսի ճանապարհով, որ նոյն այդ ազգին հակասութեան մէջ չդնէ մարդկութեան ճակատագրի հետ, յարգէ բարոյական և քաղաքական պարտականութիւնը», ուրիշ խօսքով՝ Բլունչլին ուզում է ասել, որ պետութիւնը պէտք է հետապնդէ ազգի բարոյական, մտաւորական և անտեսական բարգաւաճումը, առանց վնասելու ընդհանուրի, մարդկութեան շահերին։ Փէանէի, Էմիլ Լավրլէի և ուրիշների կարծիքով, պետութեան էական նպատակն է իրաւունքը գործադրել. նա պէտք է միջամտէ ընկերային բոլոր յարաբերութիւնների մէջ և վերացնէ անիրաւութիւնները, որոնք անցեալի ժառանգութիւնն են։ Սա նորագոյն քաղաքագիտական դպրոցի (interventionniste) տեսակէտն է։

Եթէ պետութիւնը մի երկրի մէջ գտնուող ազգի կամ ազգերի քաղաքական կազմակերպութիւնն է, ապա հարց է ծագում թէ՝ ի՞նչ է ազգը։

Ազգ է կազմում ընկերային այն համախմբութիւնը, որ ունի միևնոյն պատմական ծագումը,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:28 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

միևնոյն լեզուն, բարքերը, աւանդութիւնները, գրականութիւնը, կուլտուրան։

Սկզբում ցեղային նոյնութիւնը քաղաքական միութեան հիմքն էր կազմում։ Միևնոյն ցեղին պատկանողները իրանց համար քաղաքական առանձին կեանք էին ստեղծում։ Բայց երբ տնտեսական կեանքը զարգացաւ և հողը դարձաւ մասնաւոր սեփականութիւն, այն ժամանակ պատերազմները, նուաճումներն ու գաղթականութիւնները իրար հետ կողք-կողքի բերին այնպիսի ազգաբնակութիւններ, որոնք տարբեր ցեղագրական ծագում ունէին։ Ցեղային ինքնութիւնը այլևս քաղաքական միութեան հիմք չծառայեց, տարբեր ցեղագրական միութիւններ հպատակուեցան մի վիհապետի։ Այդպէս եղաւ, օրինակ, ասորական, պարսկական, յունական և հռովմէական կայսրութիւնների օրով։

Ազգային հարցը իր արդիական իմաստն ու նշանակութիւնը ստացել է Ֆրանսիական Յեղափոխութիւնից ի վեր, որ անհատի անձեռնմխելիութեան հետ միաժամանակ յայտարարեց և՛ ազգերի անձեռնմխելիութիւնը։ Դարերի պատմութիւնը ստեղծել էր ազգային ուրոյն անհատականութիւններ, իրանց քաղաքակրթական մասնայատուկ պայմաններով, լեզուով, բարքերով, աւանդութիւններով. հանճարի ինքնատիպ արտադրութիւններով և այդ իրողութիւնը չէր կարելի անտեսել այն ժամանակ, երբ յայտարարում էին քաղաքական հաւասարութեան սկզբունքները, ժողովրդական միահեծանութիւնը, ռամկավարութիւնը, սահմանադրական և պարլամենտական ռէժիմը։ Ազգն էլ, որպէս մարդկութեան մի անբաժան մասնիկը, պէտք է իր ինքնադրոշմ քաղաքակրթութիւնը, իր մասնաւոր

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:28 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ազգակները ներդաշնակորէն զարգացնելու իրաւունքը ունենար։ Դա մարդկային ազատութեան էական ու անհրաժեշտ պայմաններից մէկն էր։ Եւ Այսօր այդ գաղափարը տարածուել է ամբողջ քաղաքակիրթ աշխարհում։ Երէկուայ ճնշուած ու հալածուած ազգութիւնները այսօր իրանց ինքնուրոյն կեանքը ազատօրէն զարգացնելու պայմաններ են ձեռք բերում՝ կամ քաղաքական-պետական անկախութեամբ և կամ տեղական ինքնավարական հաստատութիւնների ստեղծումով։ Ցունաստանը, Սերբիան, Ռումանիան, Բոլգարիան, Մոնթէնէգրոն, Իտալիան, Գերմանիան, Հոլանդիան ձեռք բերին իրանց քաղաքական միութիւնը։ Ուրիշներն էլ այսօր կամ հետևում են նրանց օրինակին և կամ առանց անկախ, անջատ կազմակերպութիւն ստեղծելու, աշխատում են ապահովել իրանց գոյութիւնն ու զարգացումը միևնոյն պետութեան մէջ, քաղաքական տարբեր օրգաններով։

Սոցիալիզմը հակառակ չէ ազգութիւնների այդ ուրոյն զարգացման գաղափարին։ Նա ընդունում է ազգութիւնների անկախութիւնն ու ինքնավարութիւնը, որովհետև դա մի կենսական անհրաժեշտութիւն է նկատում մարդկութեան անսայթաք յառաջադիմութեանը, նրա ընդհանուր բարօրութեանն ու երջանկութեանը համար։ Նա ոչ միայն ընդունում է, այլև կոչ է մղում, որ ամեն մի ազգ լիակատար իրաւունք ունենայ անարգել կերպով զարգացնելու ու մշակելու իր գիտակցական կեանքը, իր ինքնատիպ հանճարն ու ունակութիւնները, որոնցից օգտուելը ընդհանուր քաղաքակրթութիւնն է։ Սոցիալիզմի տեսակէտով ապագայ համամարդկային ընտանիքի հոյակապ չէնքը պիտի կառուցի

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:28 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ներկայ ազգային սիւների վրայ։ Հիմնովին սխալ է, ուրեմն, եթէ ոչ ձրի զրպարտութիւն, այն կարծիքը թէ՝ սոցիալիզմը ձգտում է ջնջել ներկայ ազգութիւնները և աշխատում է ստեղծել համաչխարհաքաղաքացիական ընդհանուր, միապաղաղ ու միաձոյլ, մի ամբողջութիւն։

Միջազգայնութիւն չի նշանակում ազգային միութիւնների անհետացում, այլ ինքնավար ու ազատ ազգութիւնների մի դաշնակցութիւն։ Սոցիալիզմը երաշխաւորում է բոլոր ազգութիւնների պատմա-անհատական գոյութիւնը և աշխատում է նրանց միջից վերացնել փոխադարձ ատելութիւններն ու կռիւները, որ արդիւնք են ներկայ կապիտալիստական կարգերի։ Նա դէմ է մէկը միւսին տիրապետելու տենչանքներին, նաև ճնշելու ազգայնական քաղաքականութեան, որտեղ հետև մէկի իրաւունքների ոտնակոխումը համաձայնում է մի ոճիր մարդկութեան դէմ։ Նա ցանկանում է բոլոր ազգերի և ժողովրդների մէջ հաստատել փոխադարձ սիրոյ և համերաշխութեան կապերը և այդպիսով կանգնեցնել ապագայ մարդկութեան յաղթական տաճարը, փառայեղ պանթէոնը, ուր բոլորն էլ իրանց տեղը պիտի գրաւեն հաւասար իրաւունքներով և պարտականութիւններով։

Եթէ սոցիալիզմը ինքն իրան միջազգայնական է յայտարարուում, պատճառն այն է, որ իր մղած կռիւը ազգային սահմաններից շատ աւելի ընդարձակ է։ Արդի տնտեսական բարեկարգումը ստեղծել է այնպիսի խոշոր ձեռնարկութիւններ, որոնք իրանց ցանցերը տարածել են երկրագնդի ամենահեռաւոր անկիւնները։ Կապիտալիզմը չէ սահմանափակուել ազգային չուկաներով մէջ, նա տարածուել է երկրագնդի ամեն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:28 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

մասերում, և դրա համար է, որ կարլ Մարքսն ու Ֆրէդրիխ Էնգէլսը իրանց «Կոմունիստական Մանիֆէստ»ի մէջ բոլոր երկիրների բան. որներին հրաւէր էին կարդում միանալ և կոիւ մղել կապիտալիզմի դէմ, որը արդէն ինքն էր խորխակել ազգային սահմանները, պատնէշները։ Բայց սոցիալիզմի այդ միջազգային կոիւը ազգութիւնների վերացման չի ձգտում, այլ արդի կապիտալիստական իրաւակարգի ջնջման։

Պետական յատկանիշները.— Պետութիւնը ունի երկու յատկանիշ, — ներքին միահեծանութիւն, այսինքն՝ ամբողջ երկիրը առանց օտար միջամտութեան, ինքնիշխան կառավարելու իրաւունքը, և արտաքին միահեծանութիւն, այսինքն՝ ամբողջ երկիրը արտաքին աշխարհի առջև ներկայացնելու և նրա անունով օտար պետութիւնների հետ յարաբերութեան մէջ մտնելու, քաղաքական, տնտեսական և այլ դաշինքներ կնքելու ազատ իրաւունքը։

Արդի քաղաքական իրաւունքի (droit public) տեսակէտով այս երկու ատորոգելիները մի ուրէք պետութեան անկախ գոյութեան հիմունքներն են։ Երբ մի պետութիւն զրկուած է այս անհրաժեշտ պայմաններից, նա անկախ մի պետութիւն չի համարուում այլևս։ Այդ տեսակէտից Թուրքիան մի անկախ պետութիւն չէ, որովհետև երկրի թէ՛ ներքին և թէ՛ արտաքին յարաբերութիւնների մէջ ազատ տնօրինութիւններ չի կարող անել։ Նա քաղաքականապէս և տնտեսապէս ենթարկուած է եւրոպական պետութիւնների ազդեցութեանը։ Սրանք ստանձնել են թրքահպատակ քրիստոնեաների հովանաւորութիւնը, ունին թղթատարական վարչութիւններ երկրի ամեն մասերում, հաստատել են կապիտուլասիոներ, այսինքն՝ եւրոպացիների

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:35 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

բացառիկ առանձնաշնորհումները, իրանց ձեռքումն են կենտրոնացրել ելմտական բոլոր աղբիւրները «Օսմանեան Հանրային Պարտքի Վարչութեան» միջոցով, ամբողջ ասիական նահանգները բաժանել են տնտեսական ազդեցութեան շրջանակների և վերջապէս իրանց թևարկութեան տակ են առել Թիւրքիայի ամբողջ ցամաքային և նաւային զօրութիւնը։ Արևելեան խնդրի ծագման օրից մինչև այսօր կատարուած այս իրողութիւնները Թիւրքիային զրկել են ներքին և արտաքին միահեծանութեան իրաւունքներից։

Պետութեան ձևերը.— Պետութիւնը մի քանի ձևեր կարող է ունենալ, նայելով թէ՝ երկրի ներքին և արտաքին միահեծանութեան իրաւունքը ո՞ւմն է պատկանում։ Այսպէս օրինակ, կան բացարձակ միապետութիւններ, սահմանադրական միապետութիւններ, հանրապետութիւններ և դաշնակցական պետութիւններ։

Բացարձակ միապետութիւնների մէջ միահեծանութեան, այսինքն՝ երկրի ներքին և արտաքին գործերը տնօրինելու իրաւունքը կենտրոնացած է մի եզակի անձի մէջ. սա է, որ երկիրը ինքնիշխան կերպով կառավարելու իրաւունքն ունի և իրանից դուրս ոչ ոք այդ իրաւունքը չունի։ Միահեծանութեան անուանակիրը և ենթական ինքն է միայն և իր անձի մէջ մարմնացնում է ամբողջ պետութիւնը։ Լուդովիկոս 14-րդը, ֆրանսիական թագաւորը, երբ ասում էր թէ՝ «Պետութիւնը ե՛ս եմ», երբէք չէր սխալւում, քանի որ ամբողջ Ֆրանսիայի թէ՛ ներքին և թէ արտաքին կառավարութեան մէջ իր միահեծան կամքն ու քմահաճոյքն էր իշխում։

Հանրապետութիւնների մէջ միահեծանութեան անուանակիրն ու ենթական, փոխանակ մի եզակի

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:36 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

անձի, անձերի մի խումբ, հաւաքականութիւնն է։ Հանրապետութիւնների և բացարձակ միապետութիւնների հիմնական, էական տարբերութիւնը հէնց դրանումն է կայանում։

Սահմանադրական միապետութիւնների մէջ միահեծանութեան իրաւունքը ամբողջապէս մի անձի չի պատկանում, այնտեղ կան և՛ ուրիշ ենթականեր, որոնք այդ իրաւունքի մէջ մասն ու բաժին ունեն։

Այդ ենթակաները մի կողմից թագաւորն է, իսկ միւս կողմից ժողովրդի մէկ կամ մի քանի ներկայացուցչական ժողովներն են։ Սակայն, երկու տեսակ սահմանադրական-միապետութիւններ կան, որոնք միմեանցից խորապէս տարբերւում են։ Ոմանց մէջ ժողովուրդը միահեծանօրէն գործում է և ժառանգական միապետը կապւում է, ընկերանում է ժողովրդին։ Օրինակ, 1831-ի, Փետրվար 7-ի բելճիքական սահմանադրութեամբ ժողովուրդն է աւելի միահեծան ճանաչւած և ժառանգական միապետը մասնակի իրաւունքներ ունի միայն։ Երկրորդ կարգի սահմանադրական — միապետութիւնների մէջ, ընդհակառակը, միապետը, վեհապետն է, որ աւելի միահեծան իրաւունք ունի և իր այդ յատկութեամբ ներկայացուցչական ժողովներին յանձնում է մասնաւոր իրաւունքներ միայն։ Այդպիսի սահմանադրական-միապետութիւն էր ներկայացնում, օրինակ, 1914-ին Ֆրանսիական պետութիւնը։ Նոյն բանը ներկայացնում են և այսօր ռուսական և օսմանեան պետութիւնները։ Օսմանեան կայսրը, իբրև Սուլթան և Խալիֆա, միահեծան միապետ է և ներկայացուցչական ժողովները, որոնցից մէկը՝ պարլամենտը (խորհրդարան) ընտրւում է ժողովրդի կողմից անուղղակի կերպով, իսկ միւսը՝

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:37 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ժերաակոյտը (աւագների ժողով) ընտրուում է կայսեր կողմից, երկուսն էլ միահեծանութեան չափազանց սեղմ, կրճատուած իրաւունքներ ունին:

Առաջին կարգի տահմանադրական-միապետութիւնները իրանց հիմնական սկզբունքներով մօտենում են հանրապետութիւններին, իսկ երկրորդ կարգինները՝ հակառակ չնորհուած մի չարք ազատութիւններին՝ իբրև հիմք բացարձակ-միապետութեան սկզբունքն ունին:

Մինչև այժմ մեր թուած պետական ձևերի մէջ, —բացարձակ միապետական, տահմանադրական-միապետական և հանրապետական—միահեծանութիւնը պահում է իր կատարեալ միութիւնը: Չնայած որ նա ունի երբեմն մի քանի ենթականեր, այնուամենայնիւ, մէկ և անբաժան է, որովհետև երկրի թէ ներքին և թէ արտաքին կառավարութեան մէջ նա նոյն զօրութեամբ և ոյժով է արտայայտւում: Այդ իսկ պատճառով յիշեալ բոլոր պետութիւններն էլ կոչւում են միաւորական պետութիւններ:

Դաշնակցական պետութիւնների մէջ միահեծանութիւնը բաժանուած է: Դաշնակցական պետութիւնը կազմուած է մի չարք փոքր պետութիւններից, որոնցից իւրաքանչիւրը իր ներքին միահեծանութիւն ունի, այսինքն՝ իր առանձին կառավարութիւն ու յատուկ օրէնքները: Բայց այդ պետութիւններից կազմուած դաշնակցական պետութիւնը, իբրև ամբողջութիւն, իր կառավարութիւն ունի և արտաքին միահեծանութեան իրաւունքը վերապահուած է միայն իրան: Նա է, որ ներկայացնում է ամբողջութիւնը արտաքին աշխարհի առաջ և նրա անունով էլ բանակցում է զանազան պետութիւնների հետ: Ընդհանուր հարցերը, ինչպէս օրինակ,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:37 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

պատը, հեռագիրը, մաքսը, բանակը, և այլն, մտնում են դաշնակցական պետութեան իրաւասութեան սահմանների մէջ։

Դաշնակցական պետութիւններ են այժմ Միացեալ Նահանգները, Զուիցերիան և Գերմանիան։

Պատմութիւնը ցոյց է տալիս, որ դաշնակցական պետութիւններ ստեղծելու համար նախապէս անհրաժեշտ է անկախ, անջատ պետութիւնների գոյութիւնը, որոնք քաղաքական, տնտեսական համանման շահեր ունենան։ Ներկայումս էլ դաշնակցական պետութիւն կազմելու գաղափարը արմատ է գտնում այն երկիրներում, որոնք սահմանակից և միօրէ լինելով չեն կարողանում իրանց գոյութիւնն ու զարգացումը ապահովել մեծ, ուժեղ պետութիւնների դէմ։ Բալկաններում, օրինակ, միշտ հարց է եղել դաշնակցութիւն ստեղծելու և եթէ մինչև այժմ այդ գաղափարը չէ իրագործել ազգայնական ուժեղ հակամարտութիւնների պատճառով, այնուամենայնիւ, ապագայում բալկանեան դաշնակցական պետութիւնը անխուսափելի անհրաժեշտութիւն պիտի դառնայ։

Աւելացնենք և՛ այն, որ դաշնակցական պետութիւն կազմելուց առաջ, Համադաշնակցութիւն է ստեղծւում։ Համադաշնակցող պետութիւնները իրանց ներքին և արտաքին անկախութիւնը կատարելապէս պահում են և միայն ընդհանուր բնաւորութիւն ունեցող խնդիրների շուրջն են համաձայնւում։ Ժամանակի ընթացքում, այդ համադաշնակցական կապը աւելի և աւելի զօրանում է և տեղի է տալիս դաշնակցական պետութեան, ուր ինչպէս պարզեցինք վերեւում, իւրաքանչիւր պետութիւն կորցնում է իր

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:37 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

արտաքին միահեծանութիւնը և պահում է միայն ներքին միահեծանութիւնը։

Այդքի առաջ ունենալով մինչև այժմ կատարուած պետական էվոլիւցիան, դաշնակցական պետութեան կազմութեան ազդակները և Թիւրքիայի քաղաքական, ցեղագրական պայմանները, վճռականօրէն կարելի է ասել, որ Թիւրքիան դաշնակցական մի պետութեան վերածելու գաղափարը ցընորական մի մտածում է։

Ի՞նչ է կառավարութիւնը, կառավարութեան ձևերը.— Պետութիւնը, ինչպէս ասացինք, բուրժուա-ազատամտական կարծիքով, իրաւական մի անձնաւորումն է մի երկրում ապրող ազգի կամ ազգերի։ Իբրև այդպիսին, նա ուրեմն իրական չօշափելի մի մարմին չէ, այլ մի բարոյական անձնաւորութիւն։ Անհրաժեշտ է, հետևաբար, որ նա իր անունով գործող, ներքին և արտաքին միահեծանութիւնը գործադրող մի օրգան, մարմին ունենայ։ Այդ օրգանը, մարմինը, ահա, կազմում է կառավարութիւնը։ Կառավարութիւնը այն օրգանն է, որ պետութեան անունով գործադրում է միահեծանութիւնը, այսինքն՝ հրատարակում է օրէնքներ, փոփոխում կամ չնչում է նրանց, հսկում է հրատարակուած օրէնքների անշեղ կիրառութեան վրայ, խնամք է տանում երկրի ապահովութեան մասին և վարում է արտաքին, միջազգային յարաբերութիւնները։ Սակայն նայելով թէ՝ այդ միահեծանութիւնը ո՞վ է գործադրում և ի՞նչպէս է գործադրում, դրա համեմատ էլ կառավարութեան երեք տարբեր ձևեր կան։

Ուղղակի կառավարութիւն, ուր վեհապետը ինքն է, որ կամայական կերպով և լոկ իր կամքով գոր-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:37 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

վերջնականապէս վաւերացնում ներկայացուցչական ժողովների քւէարկած վճիռները և նրանց օրէնքի ոյժ տալիս, նախարարներին կոչում և արձակում, ներկայացուցչական ժողովները լուծում, երբ որ կամենում է, պատերազմ է յայտարարում և խաղաղութիւն կնքում՝ առանց ժողովրդի ներկայացուցիչների հաւանութեան, և այլն։ Այդ տեսակ կառավարութիւնը իսկապէս առերևոյթս միայն ներկայացուցչական է, որովհետև ժողովրդական ներկայացուցիչները հնազանդ, կամակատար գործիքներ են։ Այդպիսի կառավարութիւն ունեն Թուրքիան, Ռուսաստանը, և այլն։

Կաստարեալ-ներկայացուցչական կառավարութիւն, ուր միահեծանութիւնը գործադրում են ժողովրդից ընտրուած ներկայացուցչական ժողովը կամ ժողովները։ Թէև այդպիսի կառավարութեան մէջ կարող է և վեհապետ լինել, բայց իրականապէս նա միահեծանական իրաւունքներ չունի։ Երկրի թէ ներքին և թէ արտաքին գործերի ղեկը գտնուում է ժողովրդական ներկայացուցիչների ձեռքում և վեհապետը աւելի չուտ պատուոյ տիտղոս ունի։ Օրէնքների հրատարակումը, նրանց փոփոխութիւնը կամ ջնջումը, երկրի ընդհանուր եկամուտքի քննութիւնը, արտաքին յարաբերութիւնների պահպանումը, և այլն, ներկայացուցչական ժողովներից կախումն ունեն։

Առաջին ձևի կառավարութիւնը գոյութիւն ունի բացարձակ միապետութիւնների մէջ, երկրորդը՝ սահմանափակ սահմանադրական-միապետութիւնների մէջ, իսկ երրորդը՝ լայն սահմանադրական-միապետութիւնների և հանրապետութիւնների մէջ։

Պետութեան և կառավարութեան ու նրանց

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:38 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ձևերի բացատրութիւններից յետոյ, այժմ դիւրին է ըմբռնել, թէ ի՞նչ սահմանադրութիւնը։

Սահմանադրութիւն է կոչւում այն վաւերացրած օրէնքների ամբողջութիւնը, — որոնք տուվորաբար մշակւում և հրատարակւում են այդ ատթիւ մասնաւորապէս կազմւած ազգային ընդհանուր ժողովից, — որը պետական միահեծանութեան կամ ներքին ու արտաքին բոլոր հարցերի կարգադրութեան համար՝ գծում է մի կողմից վեհապետի իրաւունքների չափը և միւս կողմից՝ ներկայացուցչական ժողովների մասնակցութեան սահմանը։

Ուրեմն, սահմանադրութիւնը թէ վեհապետի և թէ ժողովրդից ընտրւած ներկայացուցչական ժողովների իրաւունքների սահմանն է որոշում։ Բառացի նշանակութեամբ սահմանադրութիւն բառի իմաստը ինքնին պարզ է արդէն, — սահման դնել։

Սահմանադրութիւնը կոչւում է հիմնական օրէնք, որովհետև պարզ օրէնքների նման փոխուութեան չի ենթարկւում։

Ըստ Ֆէրդինանդ Լասալի, (1) այս սահմանաւորումը Սահմանադրութեան արտաքին, իրաւական նշանակութիւնն է միայն պարզում և ոչ թէ սահմանադրութեան ոգին, էութիւնը։ Նրա կարծիքով բաւական չէ միայն ասել թէ սահմանադրութիւնը ազգային ժողովի կողմից հաստատւած այն հիմնական օրէնքն է, որ որոշում է մի ազգի քաղաքական կազմակերպութիւնը, որովհետև այդ սահմանաւորումը մեզ չի ասում թէ՝ ի՞նչպէս է ստեղծւում այդ հիմնական օրէնքը, ի՞նչ բանի արդիւնք է նա,

(1) Տես Ֆէրդինանդ Լասալ՝ «Սահմանադրութեան էութեան մասին» բրոշիւրը։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:38 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ինչո՞ւ համար նա հիմնական է և պարզ օրէնքների նման փոփոխութեան չի ենթարկուում։ Լասսալը դրա համար մի ուրիշ սահմանաւորումն է տալիս սահմանադրութեան։ Նա ասում է, որ սահմանադրութիւնը մի երկրի մէջ գոյութիւն ունեցող հասարակական ոյժերի դրական, իրական յարաբերութիւնն է։ Նայելով թէ տրուած մի երկրի մէջ ինչ սարակական ոյժեր, դասակարգեր կան և թէ դրանք ի՞նչպիսի տնտեսական, ընկերային փոխ-յարաբերութիւններ ունեն իրար նկատմամբ, ըստ այնմ էլ քաղաքական-վարչական մի կազմակերպութիւն, սահմանադրութիւն կը լինի, ուրիշ խօսքով՝ սահմանադրութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ո՛չ՝ ընկերային այդ դասակարգերի փոխ-յարաբերութեանց իրական արտայայտութիւնը։ Եթէ, օրինակ, տրուած մի երկրի մէջ կայ մի թագաւոր, որ իրական իշխանութիւն ունի, որին հպատակուում է ամբողջ ժողովուրդը, եթէ կայ մի ազնուականութիւն, որ իր ձեռքում կենտրոնացրել է բոլոր հողերը, և ի հարկին, կարող է բանակի ոյժով պաշտպանել իր սեփականութեան իրաւունքը, ապա այդ դէպքում թագաւորն ու ազնուականութիւնը երկրի սահմանադրութեան մէջ ուրիշ դիրք չեն կարող ունենալ, քան ինչ որ ունեն արդէն իրականութեան մէջ։ Բայց երբ իրական կեանքի մէջ, նրանք կորցնում են իրանց այդ առանձնաշնորհեալ դիրքը, որովհետև ոչ ոք չի ցանկանում հպատակուել թագաւորին և պաշտպանել ազնուականութեան շահերը, այդ ժամանակ փոխուում է երկրի սահմանադրութիւնը։ Եթէ թագաւորի փոխարէն ժողովուրդն ինքն է այս անգամ իրական իշխանութիւն ձեռք բերում և ազնուականութեան փոխարէն մի նոր դա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:38 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

սակարգ՝ բուրժուազիան է տիրանում երկրի հարստության աղբիւրներին, այդ ժանանակ սահմանադրութիւնը ոչ այլ ինչ պիտի լինի, եթէ ոչ հասարակական այդ նոր տարրերի կեանքի մէջ ունեցած իրական ազդեցութեան արտայայտութիւնը։ Սահմանադրութիւնը, ուրեմն, մի երկրի մէջ գոյութիւն ունեցող ընկերային ոյժերի իրական յարաբերութիւնն է և նրա փոփոխութիւնը կախուած է այդ իրական յարաբերութիւնների փոփոխութիւնից։

Սահմանադրական շարժումը, ներկայ իմաստով ու բովանդակութեամբ, սկսել է 18-րդ դարի երկրորդ կէսից։ Ամերիկայի և Ֆրանսիայի յեղափոխութիւնները յեղաշրջեցին նախկին բացարձակ բռնապետութիւնն ու ինքնակալութիւնը, որի մարմնացումն էր մի անձն, վեհապետը։ Այդ յեղափոխութիւններով ժողովուրդը իրաւունք ստացաւ պետութեան գործերի ղեկավարութեան մէջ և վեհապետը կորցրեց իր բացարձակ արտօնութիւնները։ Երկու երկիրներում էլ սահմանադիր ազգային ընդհանուր ժողովներ գումարուեցին, որոնք սահմանադրական հիմնական օրէնքներ մշակեցին։ Ժողովրդի քւէարկութեամբ ընտրուած ներկայացուցչական ժողովները վեհապետի հետ մի մասին բաժանեցին միանձնանութեան իրաւունքը։ Սահմանադրական այդ շարժումը Ամերիկայից ու Ֆրանսիայից տարածուեց եւրոպական միւս երկրներում, ուր նոյնանման սկզբունքներով քաղաքական հաստատութիւններ երևան եկան։ Յետագայ տարիների ընթացքում աւելի լայն սկզբունքներով սահմանադրութիւններ ստեղծուեցին։ Ֆրանսիայում, 1814-ին, կազմուեցին երկու ժողովներ՝ օրէնսդրական իրաւասու-

Generated on 2016-07-15 10:38 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

թիւններով, — պարլամենտ (խորհրդարան) և ծերակոյտ (աւագների ժողով), պատասխանատու նախարարութիւն, հրատարակեցին մամուլի ազատութիւն, սահմանադրական երաշխաւորութիւններ, և այլն։

Բէլգիքայում, 1831-ին, աւելի լայն սահմանադրութիւն յայտարարուեց։ Այդպիսով, կարճ ժամանակում, եւրոպական շատ երկիրներում սահմանադրական ռէժիմը յաղթանակեց։ Յունաստանն անդամ 1844-ին ունեցաւ իր սահմանադրութիւնը։ 1848-ին, Ֆրանսիայում կրկին յեղափոխութիւն ծագեց, որը լայն փոփոխութիւններ ներմուծեց նախկին սահմանադրութեան մէջ։ Հաստատուեց հանրաքուէն, ըստ որում ամեն չափահաս քաղաքացի ներկայացուցչական ժողովի ընտրութիւնների համար քուէարկելու իրաւունք ստացաւ։ Այդ պատմական թւականից յետոյ գրեթէ ամբողջ Եւրոպայում սահմանադրական փոփոխութիւններ եղան և երկրի գործերի մէջ ժողովրդական ներկայացուցիչների մասնակցութեան սահմանը ընդարձակուեցաւ։

Նախկին դրութիւնը, այսինքն՝ բացարձակ բռնապետութիւնն ու ինքնակալութիւնը իրանց գոյութիւնը պահեցին միմիայն Ռուսաստանի, Թիւրքիայի և Պարսկաստանի մէջ։ Սակայն, այդ երկիրներում ևս սահմանադրութեան հաստատման փորձեր եղան։ Թիւրքիայում, 1876 թւականին, հռչակուեց Միդհադ փաշայի գծած սահմանադրութիւնը, որը թէև իսկապէս մի «պոչատ» սահմանադրութիւն էր, որովհետև սուլթանի բացարձակ իրաւունքները, մասամբ միայն ջնջում էր, այնուամենայնիւ, շատ կարճ կեանք ունեցաւ և հետևեալ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:38 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

տարին իսկ խափանեց Սուլթան Համիդի ձեռքով։ Ռուսաստանում, 1905-ին, յեղափոխական ահեղ շարժումը ստիպեց ցարին զիջումներ անելու և նա հոկտեմբեր 27ի մանիֆէստով նեղ, սահմանափակ մի սահմանադրություն յայտարարեց։ Այդ սահմանադրությունը, սակայն, ժողովրդի պահանջներին ոչ մի բաւարարություն չի կարող տալ, ուստի յեղափոխությունը այնտեղ վերջացած չպէտք է նկատել։ Մոտիկ ապագայում նա ուժգնօրէն պիտի պայթի կրկին և ընդարձակ, լայն սահմանադրություն ստեղծէ, լիովին համապատասխան ժողովրդային ցանկություններին։ Պարսկաստանում, նոնպէս, 1907 ին, յեղափոխության միջոցով սահմանադրություն հրատարակեց։ Երդմնադրուժ Մէհմէդ Ալի շահը խափանեց այդ սահմանադրությունը և այդ օրից մինչև հիմա, երկիրը արիւնահեղ խռովությունների մի թատերավայր է։

32 տարի չարունակ, Աբդիւլ-Համիդը միահեծանօրէն իշխելով և երկիրը իր քմահաճոյքով կառավարելով՝ ընդհանուր ատերածություն ու քայքայում առաջ բերեց։ 1908, յուլիս 24-ին, ինչպէս յայտնի է, զինուորական մի հարուածով վերահաստատեց Միդհադեան սահմանադրությունը։

Միդհադի սահմանադրությամբ, ինչպէս ասացինք, սուլթանը պահում է, մեծ մասամբ, իր բացարձակ իրաւունքները։ Գուվարուոդ խորհրդարանը խորհրդակցական բնաւորություն ունի միայն և ծերակոյտն էլ ուղղակի սուլթանի կողմից է նշանակուում։ Նախարարները պատասխանատու չեն խորհրդարանի առջև և սուլթանը իր կամայական հրամանագրերով ազատօրէն կարող է լուծել ներկայացուցչական ժողովները, նախարարներին արձա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:38 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կել ու արտաքին յարաբերութիւնների մէջ էլ միահեծանօրէն վճռել ամեն ինչ։ Այնպէս որ Թիւրքիան այժմ կէս-ներկայացուցչական կառավարութիւն է կազմում, որի մասին կը խօսել ենք վերևում։

Նորագոյն սահմանադրական իրաւունքի սկզբունքները, սակայն, լիովին հակադրութեան մէջ են Միդհատեան սահմանադրութեան հետ։ Այդ սկզբունքների հիման վրայ՝ եւրոպական շատ երկիրներ, Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան, Գերմանիան, Աւստրօ-Հունգարիան, Զուիցերիան, Դանիմարքան, Բելճիքան, Հոլանդիան, եայլն, կատարեալ ներկայացուցչական կառավարութիւն ունին, ուր աւելի կամ նուազ չափով, ժողովուրդն է տնօրինում պետութեան գործերը։

Թիւրքիան իր պետական գոյութիւնն ու զարգացումը չի կարող ապահովել Միդհատեան սահմանադրութեամբ, որ զուրկ է ռամկավարական հիմունքներից և անտեսում է իր ծրցում ապրող ժողովրդների, ազգութիւնների անձեռնխելի իրաւունքները։ Նա իր գոյութիւնը կարող է ապահովել միայն ռամկավարական լայն սահմանադրութեամբ՝ հիմնուած բաղկացուցիչ ժողովրդների իրաւահաւասարութեան սկզբունքի վրայ։ Իսկ դրա համար անհրաժեշտ է կերարկել օրէնսդրական ապակենտրոնացման՝ տեղական ինքնավարութիւնների ռէժիմը։

Սահմանադրական շարժման այս հաստատ պատմականից յետոյ, անցնենք ցոյց տալու, թէ որոնք են այն հիմնական սկզբունքները, որոնց վրայ հիմնուած են նորագոյն սահմանադրութիւնները։

Նորագոյն սահմանադրութիւնների հիմնական

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:39 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

սկզբունքներն էն՝ ժողովրդական միահեծանութիւն, գաղտնի, ուղղակի. ընդհանուր և հաւասար ձայնատուութիւն, համեմատական ներկայացուցչութիւն, ժողովրդական վերհսկողութիւն, մէկ օրէնսդիր ժողով. իշխանութիւնների բաժանումն, — օրէնսդիր, գործադիր և դատաստանական իշխանութիւններ:

Այս սկզբունքների վրայ, առանձին առանձին, մենք կը ծանրանանք երկարօրէն, որովհետև սրանք կազմում են ուղղակի, ամբողջական հիմքը նորագոյն սահմանադրական իրաւունքի։

Ժողովրդական Միահեծանութիւն.— Միահեծանութիւնը, հասարակական իշխանութիւնը, և այն գործադրող կառավարութիւնը ամբողջութեան օգտի համար գոյութիւն ունեն: Ուրեշ խօսքով՝ քաղաքական կազմակերպութեան գոյութիւնը ընդհանուրի երջանկութեան ու բարօրութեան համար է միայն, այլապէս նա ոչ է միտք չէր ունենայ։ Այդ ճշմարտութիւնից բղխում է այն հետևութիւնը, որ ընդհանրութիւնն էլ պիտի մասնակցութիւն ունենայ հասարակական իշխանութեան գործադրութեան մէջ: Եթէ պետութիւնը մի երկրի բովանդակ ժողովրդի քաղաքական ընկերակցութիւնն է, ապա ուրեմն նրա ներքին ու արտաքին միահեծանութեան մէջ ամբողջ ժողովուրդն էլ մասն ու բաժին պիտի ունենայ: Այս սկզբունքը բանականութեան ու ողջմտութեան թելադրանքն է, որ կազմում է ժողովրդական միահեծանութեան հիմքը։

Հին ժամանակներում յունական և հռոմէական հասարակապետութիւնները գործնականացրել էին այդ սկզբունքը՝ իր բոլոր հետևութիւններով, գրեթէ բնազդաբար, իբրև անվիճելի մի ճշմարտու-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:47 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

թիւն, որ բացատրութեան անկարօտ է: Միջնադարեան հասարակապետութիւնները նոյնպէս ընդունել էին այդ սկզբունքը: Նորագոյն ժամանակներում ֆրանսիական յեղափոխութիւնը հանդիսաւորապէս հրաչսկից այդ սկզբունքը. ժամանակի կարիքներից բղխած հետևութիւններով, և այն ժամանակից մինչև այժմ, քաղաքակիրթ ամբողջ աշխարհում, ուր նորագոյն հիմունքներով սահմանադրութիւն գոյութիւն ունի. ընկերութեան բոլոր անդամների ֆանակցութիւնը քաղաքական գործերի մէջ ընդունել է իրր անմիջական, էական անհրաժեշտութիւն:

Երկար դարերի ընթացքում, սակայն, բացարձակ միապետներին յաջողել է այլասերժօրէն իրենց ձեռքում կենտրոնացնել քաղաքական միահեծանութեան իրաւունքը և ժողովրդին պահել կատարեալ ստրկութեան մէջ: Այդ իրողութեան նպաստել են ժամանակի տգիտութեան եւ խաւարամտութեան ոգին, կրօնական միամիտ հաւատալիքները, դարևոր աւանդութիւններն ու բարքերը. շահագործելով ժողովրդի այդ անսահման կրաւորականութիւնը, նրա դիւրահաւատութիւնը, միապետները իրանց պաշտպան փաստաբանների միջոցով յայտարարել են, որ իրանք իրանց միահեծանութեան իրաւունքը սկզբից իվեր ժառանգել են ամենակարող Աստծուց և ոչ թէ ժողովրդից: Այդ կերպով նրանք բռնացել են ժողովրդական կամքի վրայ, գործ դրել ամեն տեսակ կեղեքումներ ու ճնշումներ և ժողովրդին երկաթէ հարուածներով ստիպել, որ իրանց բացարձակ հնազանդութիւն ցոյց տան: Երկար ժամանակ միահեծան վեհապետները կարողացան այդպէս պահել իրանց տիրապետութիւնը,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:47 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

մինչև որ ժողովուրդը կոյր ուչքերը բանալով՝ հասկացաւ թէ այդ բոլորը իր անգիտակցութեան հետևանքն է, թէ միապետը չահագործելով իր այդ տգիտութիւնը, հաստատել էր իր գերագոյն իշխանութիւնը և նւիրագործել այն աստուածային իրաւունքով: Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը ջախջախելով միապետի այդ անսահման իշխանութիւնը, բարձրաձայն յայտարարեց մարդու և քաղաքացու իրաւունքները և միապետական միահեծանութեան հակադրեց ժողովրդական միահեծանութիւնը:

Ժողովրդական միահեծանութիւնից բղխում են մի շարք հետևութիւններ, որոնց մասին կը խօսինք ստորև: Նախ ասենք, որ հասարակական իշխանութիւնը, միահեծանութիւնը ներկայումս գործադրւում է երկու ձևով, կամ ուղղակի և կամ անուղղակի կերպով: Ուղղակի է կոչւում այն ժամանակ, երբ ժողովրդի բոլոր անդամներն էլ հաւասարապէս գրական մասնակցութիւն են ունենում քաղաքական ղեկավարութեան մէջ: Անուղղակի կոչւում է այն դէպքում, երբ բոլոր քաղաքացիները բէքարկութեամբ օրէնսդրական ժողովի անդամներ են ընտրում, որոնց յանձնում են հասարակական իշխանութեան ղեկը: Առաջին պարագային, ուղղակի կառավարութեան հանդէպ ենք գտնւում, իսկ երկրորդ պարագային՝ ներկայացուցչական կառավարութեան դիմաց: Ուղղակի կառավարութիւնը, ինչպէս ասել ենք, գոյութիւն ունի Զուիցերական 4 կանտոններում, որոնք են՝ Ուրի, Գլարուս, Ապպինցել և Ունտէրվալդէն: Այդ 4 կանտոնները իրանց բնակիչների թւով և աշխարհագրական տարածութեամբ շատ փոքր են և դրա համար է, որ բոլոր քաղաքացիներն էլ անխտիր ուղղակի կեր-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:47 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

պով մասնակցում են երկրի գործերում։ Մինչդեռ մեծ ազգաբնակութիւն և ընդարձակ տարածութիւն ունեցող պետութիւններում, ներկայացուցչական կառավարութեան սիստէմը միայն կարող է կիրառութիւն ունենալ, որովհետև գործնական անկարելիութիւն կայ ընկերութեան բոլոր անդամների համար մի տեղ հաւաքելու և կազմելու ազգային ժողովը։

Ներկայացուցչական կառավարութիւնների մէջ, ուրեմն, ժողովրդի մասնակցութիւնը պետական գործերում ընտրողական իրաւունքով է որոշւում։

Ընտրողական իրաւունքը, նայելով կառավարութիւնների ձևին, զանազան ժամանակներում ու զանազան երկիրներում եղել է սահմանափակ կամ լայն։ Սահմանափակ է եղել այն տեսակէտով, որ բոլոր քաղաքացիներն էլ անխտիր քուէի իրաւունք չեն ունեցել։ Այդ իրաւունքը միայն տրուել է առանձնաշնորհեալ դիրք ունեցողներին, նրանց, որոնք հարստութիւն են ունեցել և յայտնի տուրք են վճարել կառավարութեան։ Քուէի իրաւունքի այդ սահմանափակումը ժողովրդական միահեծանութեան սկզբունքի ժխտումն է։ Մինչդեռ որպէսզի ժողովրդական միահեծանութիւնը իր ամբողջ զօրութեամբ արտայայտի, հարկաւոր է, որ առանց դասակարգի խտրութեան, ընկերային դիրքի տարբերութեան, բոլորն էլ հաւասարապէս քուէի իրաւունք ունենան։ Այդ կերպով է, որ ժողովրդի հաւաքական կամքը յարգուած կը լինի։ Բացի ընտրելու իրաւունքից, պէտք է ընտրելու իրաւունք ունենան բոլորը։ Սա ժողովրդական միահեծանութեան սկզբունքի առաջին ու ամենաէական հետևութիւնն է։ Ընտրողական վերոյիշեալ ձևը կոչ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:47 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ւում է հանրաքվէ:

Հանրաքվէն հաստատուել է 1848-ի Ֆրանսիական յեղափոխութիւնից յետոյ, բայց նրա զարգացումը կատարուել է գլխաւորապէս անցեալ դարի վերջին քառորդից։ Նա գործադրուեցաւ Հիւսիսային Ամերիկայի մի քանի պետութիւնների մէջ, Զուիցերիայի դաշնակցական և կանտոնային ընտրութիւնների համար։ Իսպանիայում հանրաքվէն հաստատուեց 1869 թուին և ջնջուեց 1877-ին, բայց 1890 թուին կրկին վերահաստատուեց։ Գերմանիայում 1871-ի սահմանադրութեան համաձայն՝ նա կիրառուում է Ռէյխստագի ընտրութիւնների համար: Ֆրանսիայում, հակառակ 1848-ի յեղափոխութեան, նա գործադրուեցաւ 1871-ից սկսած։ Բելգիքայում նա գոյութիւն ունի 1893-ից, իսկ Աւստրո-Հունգարիայում 1906-ից սկսած։

Հանրաքվէի առաւելութիւններն ու օգուտները բազմակողմանի են։ Իրաքանչիւր անհատ իբր քաղաքացի, քաղաքական գործերում իր քվէով մասնակցելով՝ քաղաքական դաստիարակութիւն կստանայ։ Բացի այդ կարևոր հանգամանքից, նա իր շահերի գիտակցութիւնը կունենայ և թոյլ չի տայ երբէք, որ մի առանձնաշնորհեալ փոքրամասնութիւն իր վճիռներին օրէնքի ոյժ տալով՝ քաղաքական գերիշխանութիւն ձեռք բերէ՝ ի վնաս իրան։

Հանրաքվէի յատկանիշները չորս են.— ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի։ Ընդհանուր ու հաւասար է հանրաքվէն այն ժամանակ, երբ 21 տարեկան բոլոր չափահասները ընտրական համահաւասար իրաւունքներ ունեն՝ առանց սեռի և դասակարգի խտրութեան, ընտրող լինելով միասին։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:48 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Վերոյիշեալ երկիրներում թէև հանրաքէն գոյութիւն ունի, բայց նա բացառապէս այր մարդկանց համար է, մինչդեռ կանայք զրկուած են ընտրական իրաւունքից։ Բացի դրանից, մի քանի երկրներում հանրաքէն որոշ սահմանափակումներ ունի և բոլոր քաղաքացիներն էլ հաւասարապէս ընտրական մի ձայն չունեն։ Այդ սահմանափակումները հետեւեալներն են, —յաւելուածական քէ (vote plural) և բազմապատիկ քէ (vote multiple)։

Յաւելուածական քէն կայանում է նրանում, որ ընտրողների մի խմբի, մի դասակարգութեան տրւում է մի քանի ձայն փոխանակ մէկի, համաձայն նրանց հարստութեան, ստացած կրթութեան, և այլն։ Այսպէս, օրինակ, ընտրական այդ օրէնքը 1839-ից ընդունուած է Բելճիքայում, ըստ որում ամեն մի 25 տարեկան քաղաքացի ունի մի ձայն, յաւելուածական ձայն շնորհւում է այն անհատին, առաջինը՝ որը հարուստ կալուածատէր է, մեծ ճարտարագործ կամ վաճառական է. երկրորդ՝ 35 տարեկան մի մարդու, որ օրինական սերումն ունի և կամ որոշ հարկ է վճարում. 2 յաւելուածական ձայն էլ տրւում է ամեն մէկին, որ կրթական վկայականներ ունի և կամ հասարակական պաշտօնեայ է։

Բազմապատիկ քէն այն սիստէմն է, որ մի ընտրողի թոյլ է տալիս մի քանի քաղաքամասերում կամ համայնքներում ընտրական ձայն ունենալու և քէարկելու։ Այսպէս օրինակ, Ֆրանսիայում մի ժամանակ գործադրւող օրէնքի համաձայն՝ ամեն մի ընտրող կարող էր քէ տալ թէ իր համայնքում կամ քաղաքամասում, ուր սեփական բնակարան ունէր, և թէ այն քաղաքամասում և համայնքում, ուր նա 6 ամսով տուն էր վարձել։ Այդ ձևով մի

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:48 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ընտրող կարող էր միաժամանակ ձայն տալ այն բոլոր ընտրական շրջաններում, ուր նա լրացրել էր վերոյիշեալ պայմանները։ Հասկանալի է, որ բազմապատիկ քվեն գերակշիռ դիրք կարող է տալ ընտրանց, որոնք կալուածական սեփականություն ունեն։

Ընտրողական այդ սիստեմը այժմ գոյություն ունի Անգլիայում։

Ցաւելուածական և բազմապատիկ քվեի կիրառությամբ, անկանկած, հասարակությանն արտօնեալ դասակարգին հնարաւորություն է տրւում երկրի քաղաքական իշխանության մէջ առաւելակշիռ ձայն ունենալու։ Աղքատ, չքաւոր դասակարգը անկարող լինելով վերոյիշեալ պայմանները լրացնելու, խորհրդարանի մէջ՝ յանձին իր ներկայացուցիչների՝ վճռական ձայն ունենալուց զրկւում է և քէարկած օրէնքները հարուստների դասակարգային շահերին ինպատասխան լինում։ Մինչդեռ ժողովրդական միահեծանության սկզբունքի տեսակէտով, հանրաքէն լինելու է անպայման ընդհանուր և հաւասար, առանց սեռի և հարստության խտրության և իւրաքանչիւր 21 տարեկան չափահաս քաղաքացի ընտրական հաւասար ձայն պիտի ունենայ՝ ընտրելու իրաւունքով։

Հանրաքէն ուղղակի է կոչւում այն ժամանակ, երբ բոլոր չափահաս քաղաքացիները անմիջական կերպով կընտրեն օրէնսդրական ժողովի՝ խորհրդարանի անդամները։ Ընտրական այդ եղանակի դէմ էլ ստեղծւել են արգելքներ մի քանի երկիրներում, ուր դրա փոխարէն ընդունւել է ընտրական անուղղակի կամ երկաստիճան ձևը։

Անուղղակի կամ երկաստիճան ընտրական եղանակով ընտրողները իրաւունք չունեն անմիջա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:48 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ջական կերպով ընտրելու պարլամենտի, խորհրդարանի, անդամները։ Նրանք իրաւունք ունեն միայն պատուիրակներ ընտրելու, որոնք իրանց միջից ընտրում են խորհրդարանի պատգամաւորներին։ Անուղղակի ընտրական այդ ձևը դրա համար էլ կոչւում է երկաստիճան։ Ցայտնի է, որ այդ եղանակով ընտրուած պատգամաւորը յաճախ ու գրեթէ միշտ ժողովրդի շահերին հակառակ է լինում և պաշտպանում է հարուստ փոքրամասնութեան շահերը։ Բացի այդ հանգամանքից, այդ ձևի ընտրութեան ժամանակ լինում են շատ խարդաւանանքներ ու յարմարումներ։

Անուղղակի հանրաքէն այժմ գոյութիւն ունի Եւրոպայում գլխաւորապէս ծերակուտական ընտրութիւնների համար։ Երբեմն այդպիսի հանրաքէն հանում է մինչև 3-4 աստիճանի։ Եւրոպայից դուրս, Ամերիկայի Միացեալ նահանգներում ընտրական նոյն դրութիւնը գոյութիւն ունի նախագահական ընտրութիւնների համար։ Ուրիշ երկիրներում, Գերմանիայում՝ լանգագների և Թիւրքիայում խորհրդարանի համար ընդունուած է այդ երկաստիճան եղանակը։ Թիւրքիայում ընտրական այդ սիստէմի հետևանքով տիրող կուսակցութիւնը, որ այժմ համիսլամական և համաթրքական ծրագիր ունեցող «Իթթիհաա վէ Թէրաքգն» է, պատուիրակների վրայ խիստ ճնշումներ է գործ դնում և այդպիսով յաջողեցնում է թեկնածուները։ Աւելորդ է ասել, որ այդ դէպքում ընտրուած երեսփոխանները ժողովրդական ազատ քուէի ներկայացուցիչները չեն։

Հանրաքէն գաղտնի է անւանւում այն դէպքում, երբ քուէարկութիւնը լինում է ծածուկ, ոչ բաց։ Շատ երկիրներում հարուստները առաջար-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:48 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կում են, որ ընտրութիւնը լինի բացարձակ կերպով, ոչ գաղտնի։ Սակայն, այդպիսի ընտրութեան ժամանակ, կարող են կողմնակի ճնշումներ ու ազդեցութիւններ գործ դրուել, որոնք քւէարկողին կարող են ստիպել իր ցանկացած անձնաւորութեան չտալ իր քւէն։ Զանազան շահերով մէկը միւսին կապուած լինելով, ընտրութեան ժամանակ, պարտաւորուում է իր քւէն տալ իր շահերին հակառակ անհատի՝ ճնշումներից խուսափելու համար։ Իսկ այդ պարագան շատ անցանկալի դէպքերի ու անպատեհութեանց ծնունդ է տալիս։

Ուրեմն, հանրաքւէն ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի պէտք է լինի։ Ժողովրդական միահեծանութիւնը ազատօրէն արտայայտուում է միայն ձայնատուութեան այդ ընդհանուր եղանակով։ Ընտրական այդ սիստեմը կոչւում է քառանդամ ֆորմուլա-բանաձև։ Բոլոր երկիրների յառաջադէմ տարրերը, ժողովրդական կուսակցութիւնները պաշտպանում են այդ բանաձևը և այնտեղ, ուր նա գոյութիւն չունի, աշխատում են իրականացնել։ Ներկայումս այդպիսի հանրաքւէն գոյութիւն ունի Ֆրանսիայում, Զուիցերիայում, Միացեալ Նահանգներում, և այլն։ Այդ երկիրներում, սակայն, կանայք զուրկ են ընտրական իրաւունքից, այնպէս որ ընտրութիւնները սեռական խտրականութեան վրայ են կատարւում։ Կանանց քւէարկութեան իրաւունքը յարգւում է միայն Հիւսիսային Ամերիկայի մի քանի նահանգներում, Նոր Զելանդիայում, Աւստրալիայում և Ֆինլանդիայում։

Հակառակ ժողովրդական միահեծանութեան գաղափարից բղխող ընտրական այդ քառանդամ բանաձևին, կայ և մի ուրիշ ընտրական սիստէմ,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:48 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

որ սահմանափակ է և հիմնուած է ցենզային ներկայացուցչութեան վրայ։ Ըստ այդ սիստէմի, քաղաքացիների մի ամբողջ ստուար խումբ, բոլորովին զրկուում է ընտրական իրաւունքից։ Ընտրական ձայն ունեն միայն նրանք, որոնք սեփականատէր են և որոշեալ հարկ են վճարում, որը կազմում է ցենզ (cens)։ Ռուսաստանում Դումայի, ինչպէս և նահանգային խորհուրդների (զեմստվո) և քաղաքային վարչութիւնների ընտրութիւնները ցենզային են։ Անգլիայում նմանապէս այդ դրութիւնը գոյութիւն ունի, թէև շատ մեղմ արտայայտութեամբ, որ մօտենում է հանրաքւէի դրութեան։ Այսպէս, օրինակ, 1884-ի օրէնքով ամեն ոք կարող է ընտրող լինել, որ նուազագոյն չափով տարեկան 10 լիվր (250 ֆրանք) տան վարձ է վճարում։

Քիչ վերը մենք բացատրեցինք, որ ժողովրդական կամքը միայն ընդհանուր, հաւասար, ուղղակի, գաղտնի ձայնատուութեան եղանակով կարող է արտայայտուել։ Սակայն, որպէսզի նա աւելի ճշտօրէն ու հաւաքականօրէն արտայայտուի, պէտք է գործադրել ընտրական և մի այլ սիստէմ, որը կոչւում է հաւասարական ներկայացուցչութիւն։

Համեմատական ներկայացուցչութեան սկզբունքը շատ պարզ է։ Ենթադրենք թէ մի քաղաքի քաղաքապետական ընտրութիւն է կատարւում։ Ըստ օրինի 50 քաղաքապետական աթոռներ կան, 50 հազար էլ ընտրողներ, որոնց ձայները ընտրական ցուցակով բաժանւում են այսպէս.—

Իթիլաֆական կոմիտէ	20	հազար
Սոց. Դէմ. Հնչակեան կուս.	15	»
Եւ Ցունական կոմիտէ	15	»

Ընդամենը 50 հազար ձայն։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:48 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ուրեմն 50 աթոռների համար 50 հազար ընտրողներ կան։ Ենթադրենք, թէ իւրաքանչիւր 1000 ընտրող կարող է ունենալ մի աթոռ, այդ դէպքում ամեն մի կոմիտէ կունենայ այնքան աթոռ, որքան անգամ նա 1000 ընտրող ունի։ Որպէսզի ընտրական մարմնի ամենակատարեալ ներկայացուցչութիւնը ապահովւի, դրա համար Իթիլաֆական կոմիտէն պիտի ունենայ 20 աթոռ, Հնչակեան կոմիտէն 15 և Ցունական կոմիտէն նոյնպէս 15։

Ինչ որ քաղաքապետական ընտրութիւնների համար է, նոյնը կարելի ասել և պարլամենտական, խորհրդարանական ընտրութիւնների համար։ Ենթադրենք, թէ մի որ և է շրջանում կան վեց հարիւր հազար ընտրողներ։ Սրանցից երեք հարիւր հազարը պատկանում են մի կոմիտէի, երկու հարիւր հազարը մի ուրիշ կոմիտէի և հարիւր հազարն էլ մի այլ կոմիտէի: Եթէ ընդունենք, որ իւրաքանչիւր 50 հազարը պիտի ընտրէ մի պատգամաւոր, այդ ժամանակ նոյն շրջանը պարլամենտի համար կարող է ուղարկել 12 պատգամաւոր։ Որպէսզի նոյն շրջանի ձայները պարլամենտում ճշտօրէն արտայայտուին, հարկաւոր է, որ համեմատական հաշուով առաջին կուսակցութիւնը ունենայ 6 ներկայացուցիչ, երկրորդը՝ 4 և երրորդը՝ 2։ Այդ դասաւորութեամբ պարլամենտում կարելի է լիակատար ու արդարացի կերպով արտայայտել երկրի ամբողջութեան կամքն ու ցանկութիւնները՝ թէ մեծամասնութեան և թէ փոքրամասնութեան։

Սակայն, ներկայումս ընտրական ներկայացուցչութիւնը հիմնւած է մեծամասնական սկզբունքի վրայ։ Շնորհիւ այդ հանգամանքի, փոքրամասնութեան ձայնը խեղդւում է և պարլամենտի ներ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:49 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կայացուցիչները, մեծ մասամբ, ընտրում են այն կուսակցութիւնից, որը որ շատ ընտրողներ ունի։ Միւս կուսակցութիւնները զրկւում են իրանց ներկայացուցիչներից և եղած ընտրութիւնները լինում են բոլորովին անհամապատասխան երկրի ընդհանուր տրամադրութեան։

Մեծամասնական սիստէմը, ուրեմն, թէ թւական և թէ քաղաքական տեսակէտով ունի լուրջ անյարմարութիւններ։

Նախ, ընտրական շրջանները թւական հաւասար մասեր չունեն շատ անգամ։ 50 հազար ձայն ունեցող շրջանը նոյն իրաւունքներն ունի, ինչ որ 25 հազար ունեցողը։ Երկրորդ թերութիւնը ընտրութիւնների արդիւնքի և ընտրական մարմնի մէջ գտնւած կուսակցութիւնների ոյժի անհամեմատութիւնն է։ Եթէ, օրինակ, մի կուսակցութիւն, ամբողջ երկրի քւէարկող զանգւածի վրայ ընտրողների մէկ ութերորդ թիւն ունի, այն ժամանակ իր ներկայացուցիչներն էլ ընդհանուր ներկայացուցչութեան մէկ ութերորդ մասը պիտի կազմեն։ Սակայն, դժբաղդաբար, այդպէս չի լինում. իւրաքանչիւր կուսակցութիւն փոխանակ իր անդամների թւին հապապատասխան ներկայացուցիչներ ունենալու, համեմատական քանակից աւելի կամ պակաս ներկայացուցիչներ է ունենում, ինչ որ բոլորովին յանիրաւի մի հանգամանք է։

Երրորդ թերութիւնը կայանում է նրանում, որ ընտրւած պատգամաւորները մեծամասնութիւն չեն ներկայացնում, այսինքն՝ պատգամաւոր ընտրող ձայների ամբողջութիւնը յաճախ նւազ է լինում պարտւած և ձեռնպահ մնացած ձայների թւից։

Բացի այս թւական թերութիւններից, քաղա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:49 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

քական անյարմարութիւնները նոյնպէս չատ աչքի զարնող են։ Ամեն տեսակ բաղկացութիւններ, խարդաւանանքներ ու մեքենայութիւններ կարելի են դառնում, որպէսզի մի քանի ձայների առաւելութեամբ մէկի կամ միւսի ընտրութիւնը ապահովւի։

Ինչ ասել կուզի, որ համեմատական ներկայացուցչութեան սիստէմով այդպիսի թերութիւններ ու անախորժ դէպքեր տեղի չեն ունենալ։ Նա առիթ է տալիս ընտրողներին, ինչպէս վերևում չեշտեցինք, իրանց ներկացուցիչները ունենալու ներկայացուցչական ժողովում։ Բացի դրանից, նա այդպիսով կը կանոնաւորէր քաղաքական կեանքը, որովհետև կուսակցութիւնների գործունէութիւնը կը դարձնէր աւելի պարզ, իւրաքանչիւրին տալով ազատ ասպարէզ՝ իր ձգտումներն ու նպատակները հետապնդելու։

Բնականաբար, որպէսզի վերոյիշեալ դրութիւնը անարգել կերպով գործադրւի, հարկաւոր է, որ քաղաքական խոշոր խմբակցութիւններ լինեն, իրանց յետևը ունենալով հասարակական յայտնի զանգւածներ։ Հակառակ դէպքում, եղած ընտրութիւնները չեն կարող մի որոշ ներկայացուցչութիւն ստեղծել և քաղաքական կեանքը պարզել։

Թիւրքիայում կուսակցութիւնների այս համեմատական ներկայացուցչութեան պահանջը չէ, որ առհասարակ դրւում է, այլ ազգային համեմատական ներկայացուցչութեան բանաձևը։ Ճիշտ է, որ Թիւրքիան զանազան ցեղերի ու ազգերի մի մօզայիկ է, բայց ըստ մեզ, ազգային համեմատական ներկայացուցչութիւնը ռամկավարական մի պահանջ չէ։ Այդ սիստէմի կիրարկութեամբ, հայ ընտրողը միայն հայ թեկնածուին պէտք է քւե

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:49 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

տայ և միւս ազգութիւններն էլ իրանց ազգային թեկնածուներին։ Այդ դէպքում, եթէ ներկայացող հայ թեկնածուն պահպանողական է և նրա հակառակորդը մի յառաջադիմական յոյն է, հայ ընտրողների քէէն պէտք է կենտրոնանայ պահպանողականի վրայ, որովհետև նա հայ է և ոչ յառաջադիմականի վրայ, որ մի յոյն է։ Մինչդեռ ժողովրդային շահերի և նոյն իսկ հայ ընտրողների շահի տեսակէտից, յառաջադիմական յոյնի ընտրութիւնը աւելի օգտակար կարող է լինել։

Ժողովրդական վերհսկողութիւն. — Որպէսզի ժողովրդական միահեծանութեան սկզբունքը իր բովանդակ զօրութեամբ արտայայտի, բաւական չէ միայն ուղղակի, հաւասար, ընդհանուր և գաղտնի հանրաքէէն և համեմատական ներկայացուցչութեան սիստէմը, հարկաւոր է նոյնպէս, որ ժողովուրդը կարողանայ հասարակական գործերի վրայ հսկել։ Այդ խնդիրը քննելով՝ զանազան լուծումներ են տուել նրան. որոնք են, հրամայական մանդատ (mandat imperatif), ռէֆէրէնդում (referemdum) և նախաձեռնութեան իրաւունք։

Հրամայական մանդատը ժողովրդական ներկայացուցչութեան սիստէմը դարձնում է աւելի կատարեալ։ Իւրաքանչիւր պատգամաւոր ներկայացնում է իրան ընտրող ժողովրդի բերանը։ Հետեւաբար, մինչև վերջ պիտի պաշտպանէ այն պահանջներն ու հայեացքները, մի խօսքով՝ այն քաղաքական ծրագիրը, որ բանաձևել է իրան ընտրողների խումբը։ Երբ նա դադարի այդ հայեացքներն ու պահանջները պաշտպանելուց, նա զրկւում է իր պատգամաւորի տիտղոսից ու իրաւունքից։ Այդպիսով, ուրեմն, պատգամաւորը դառնում է ժո-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:49 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ղովրդական կամքի գործիքը։ Այն ծրագիրը, որը ընտրող մի հասարակութեան քաղաքական դաւանանքն է կազմում, ներկայացնում է մի դաշնագիր նոյն հասարակութեան և իր պատգամաւորի հաւատ։ Երբ այս վերջինը չեղւում է այդ դաշնագրից, այնուհետև նա կորցնում է իր ընտրող ժողովրդի ձայնը ներկայացնելու իրաւունքը։ Հրամայական մանդատը ուրեմն մի զէնք է, որով ժողովուրդը իր ներկայացուցիչների գործողութեանց վրայ անուղղակի կերպով հսկում է։ Բայց ոչպէտք հրամայական մանդատը գործադրի, անհրաժեշտ է որ կազմակերպուած քաղաքական խմբակցութիւններ լինեն։ Եթէ ընտրողները կազմակերպուած չեն, այդ դէպքում նրանք չեն կարող մէկ և ամբողջական մի ծրագիր ներկայացնել և ստիպել, պարտադրել պատգամաւորին, որ հաւատարիմ մնայ ներկայացուած ծրագրին։ Որչափ մի երկրում քաղաքական կազմակերպութիւնները լաւ կազմակերպուած են, այն չափ էլ հրամայական մանդատի դրութիւնը խստօրէն յարգւում է և պատգամաւորը պարտաւորւում է նոյն չափով հաշուետուութիւն տալ՝ իր խորհրդարանական գործունէութեան մասին։

Ռեֆերենդումը.— Ռէֆէրէնդումը այն սիստէմն է, ըստ որում օրէնսդրական ժողովը իր ընդունած վճռորոշումները պիտի ենթարկէ ժողովրդական քննութեան և հաւանութեան։

Սակայն, ռէֆէրէնդումի մի քանի տեսակները կան։ Առաջին, կարելի է, օրինակ ժողովրդական կամքը հարցնել գոյութիւն ունեցող սահմանադրութեան վերաքննութեան մասին։ Այդ դէպքում Ռէֆէրէնդումը կոչւում է խորհրդակցական։

Երկրորդ, ժողովրդի խորհուրդը կարելի է հար-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:49 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ցընել օրէնսդրական իշխանութեան կողմից քւէարկելի մի ուրէ օրէնքի մասին։ Այդպիսի Ռէֆէրէնդումը կոչւում է օրհնադրական։

Օրէնսդրական ռէֆէրէնդումը երեք տարբեր ձևեր ունի։ Նա կարող է լինել պարտադիր, կամաւոր և կամ դառնալ ժողովրդական վէտոյի իրաւունք։

Պարտադիր ռէֆէրէնդումի համաձայն, օրէնսդրական ժողովի կողմից քւէարկւած բոլոր օրէնքները պէտք է ներկայացնել ժողովրդական վաւերացման։ Այդօրինակ ռէֆէրէնդումը գոյութիւն ունի այժմ Զւիցերիական մի քանի կանտոններում, ինչպէս Բալ, Բերն, Ցիւրիխ, և այլն։ Պետական ծախսերը նոյնպէս ներկայացւում են ժողովրդական հաւանութեան։

Ըստ կամաւոր ռէֆէրէնդումի, ժողովրդին իրաւունք է տրւում, մի որոշեալ ժամանակամիջոցի համար, օրէնսդրական ժողովի քւէարկած որ և է օրէնքը ընդունելու և կամ փոփոխութեան ենթարկելու։ Եթէ այդ առաջարկը որոշեալ պայմանաժամում տեղի չունեցաւ, օրէնքը կարող է կիրառութեան մէջ մտնել։

Եթէ ռէֆէրէնդումի սիստէմը ընդունում է ժողովրդական վէտոյի իրաւունք, այդ ժամանակ օրէնսդիր ժողովի քւէարկած ամեն մի օրէնքը պարտադիր է, այսինքն՝ անմիջապէս գործադրւում է։ Բայց մի որոշեալ ժամանակամիջոցում ժողովուրդը կարող է իր վէտոով ջնջել նրա գործադրութիւնը։

Ռէֆէրէնդումի դրութիւնը այժմ առհասարակ գործադրւում է Զւիցերիայում. Անկասկած, այդ դրութիւնը ժողովրդապետութիւնը աւելի ամրապնդում է և թոյլ չի տալիս, որ ներկայացուցիչների

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:49 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

մի խումբ կարողանայ, բռնապետական մի վարչութիւն կազմել։ Ինչպէս Զուիցերիական պետութեան մէջ, նոյնպէս և աւելի ընդարձակ տարածութիւն ունեցող երկիրների կարիքներին կարող է շատ լաւ պատշաճիլ այդ դրութիւնը. ի հարկէ, ամեն բանից առաջ, այդ դրութիւնը ենթադրում է հասարակական զանգուածների քաղաքական զարգացումը, դաստիարակութիւնը։

Ժողովրդական վերհսկողութիւնից և ռէֆէրէնդումից բացի, կայ և՛ մի այլ ձև, ժողովրդական նախաձեռնութեան իրաւունքը։ Այս վերջինը անհրաժեշտ լրացումն է կազմում ռէֆէրէնդումի դրութեան։ Եթէ երբէք ժողովրդական միահեծանութեան սկզբունքի համեմատ բոլոր իշխանութիւնները բղխում են ժողովրդից, այդ ժամանակ, իրաքանչիւր քաղաքացու օրէնքներ քէարկելու իրաւունքի հետ միաժամանակ պէտք է տալ օրէնքներ առաջարկելու իրաւունքը։ Բացարձակ միապետութեան մէջ այդ իրաւունքը պատկանում է միայն միապետին, պարլամենտական կառավարութեան մէջ այդ իրաւունքը պատկանում է նախարարներին և պատգամաւորներին, սակայն ճշմարիտ ժողովրդապետութեան մէջ այդ իրաւունքը պիտի պատկանի բոլորին։ Անշուշտ, երբ օրէնքների նախաձեռնութիւնը լինում է լոկ անհատների կողմից, այդ դէպքում նա կարող է աւելի շուտ անյաջողութեան մատնուիլ։ Որպէսզի մի օրէնք կարողանայ քէարկուել, պէտք է, որ նա գոնէ պաշտպանների մի խումբ ունենայ։ Ուրեմն, ժողովրդական նախաձեռնութեան իրաւունքի, այսինքն՝ ժողովրդի կողմից օրէնսդրական ժողովին օրինագծեր ներկայացնելու տեսակէտից քաղաքական խմբակ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:56 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ցութիւններն են աւելի, որ վճռական դեր կարող են խաղալ, նրանք են ընդհանրապէս, որ ազատ պրոպագանդայով հասարակական զանազան խաւերի կարծիքներն են պատրաստում և նրանց միջոցով օրէնսդրական նախագծեր ներկայացնում խորհրդարանին։ Ժողովրդական նախաձեռնութեան իրաւունքը կատարեալ ժողովրդապետութեան դրութեան հաստատումն է, որ դարձեալ ընդունուած է Զուիցերիական մի քանի կանտոններում։

Մեկ օրենսդիր ժողով.— Ընտրական եղանակները և ժողովրդական վերհսկողութեան տարբեր ձևերը պարզելուց յետոյ, այժմ հարց է ծագում թէ ներկայացուցչական ըէժիմի մէջ օրէնսդիր մեկ թէ երկու ժողով պէտք է լինի, այսինքն՝ խորհրդարա՞նը միայն պէտք է գոյութիւն ունենայ, թէ՞ ծերակոյտի գոյութիւնը ևս անհրաժեշտ է։ Ինչպէս յայտնի է, ներկայումս այդ երկու ժողովներն են, որ կազմում են օրէնսդիր իշխանութիւնը։ Դրանցից առաջինը միայն ընտրւում է ուղղակի, ընդհանուր, հաւասար և գաղտնի ձայնատուութեամբ, մինչդեռ երկրորդը ընտրական աւելի կամ նուազ սահմանափակումներ ունի։ Անգլիայում, օրինակ, երկրորդ ժողովը ազնուապետական ներկայացուցչութիւն է կազմում։ Այնտեղ մասնակցում են լորդերը, թագաւորական տոհմի անդամները, յայտնի կղերականները. և այլն։ Բացի դրանից, մասնակցութեան իրաւունքը ժառանգական է։ Ուրիշ երկրներում նոյնպէս, այդ դրութիւնը գոյութիւն ունի։ Կան երկիրներ էլ, ուր թէև այդ երկրորդ բարձրագոյն ժողովի գումարումը ընտրողական է, այնուամենայնիւ, նա հիմնւած է ցենզային ներկայացուցչութեան և կամ ընտրական սահմանափակ

եղանակի վրայ։ Շնորհիւ այդ հանգամանքի, յիշեալ երկրորդ ժողովի մէջ մուտք են գործում հասարակական այնպիսի տարրեր, որոնք հակառակ են ժողովրդական շահերին և պահանջներին։ Այդ իսկ պատճառով նրանք հակառակ են խորհրդարանի, ժողովրդի ներկայացուցիչների քէարկած օրէնքներին։ Ճշմարիտ ժողովրդապետութեան պաշտպանները կողմնակից են մէկ օրէնսդրական ժողովի, որ ընտրուում է ուղղակի ժողովրդի կողմից։ Օրէնքը ժողովրդական կամքի արտայայտութիւնն է, իսկ ժողովրդական կամքը մէկ է, հետևաբար և մէկ ժողով պէտք է լինի։ Եթէ երկու ժողովներն էլ միևնոյն աստիճանով և միևնոյն եղանակով ներկայացնեն ժողովրդական կամքը, ապա նրանցից մէկը աւելորդ է, իսկ եթէ նրանցից մէկը աւելի բարձր ստորոգելիներ ունենայ և ժողովրդական հանրաքէո՛ չընտրի ու հետևաբար չներկայացնէ ժողովրդական կամքը, ապա ժողովրդական միահեծանութեան առջև նա թուր կը կանգնի և միշտ հակառակ կը լինի ժողովրդական ցանկութիւններից բղխած բարենորոգումներին։

Այսուհանդերձ, մենք ընդունում ենք, որ դաշնակցական պետութեան մէջ, կարող է արդարացի համարուել երկու օրէնսդիր ժողովների գոյութիւնը։ Նրանցից մէկը կարող է ներկայացնել ինքնավար պետութիւնները, որոնք իրանց միահեծանութեան միայն մի մասը՝ արտաքին միահեծանութիւնը թողել են դաշնակցական պետութեան։ Երկրորդը կարող է ներկայացնել երկրի ամբողջ քաղաքացիները և քէարկել օրէնքներ բովանդակ երկրի համար, առանց իհարկէ դիպչելու ինքնավար երկրների իրաւունքներին։ Առաջին ժողովը, ուրեմն, պատկե-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:56 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

բացնում է երկրի դաշնակցական կազմը, իսկ երկրորդը՝ երկրի միությունը։ Սակայն, այդ երկու ժողովներն էլ ոչիսի ունենան ընտրական միևնոյն եղանակը՝ ժողովրդական միահեծանության սկզբունքի բոլոր հետևություններով։

Իսկ ոչ-դաշնակցական երկրներում, որպէսզի ժողովրդական միահեծանությունը լայնօրէն գործադրվի, հարկաւոր է որ գաղտնի, ուղղակի, ընդհանուր և հաւասար ձայնաւորության եղանակի, համամասական ներկայացուցչական դրության, ժողովրդական վերհսկողության ու օրէնսդրական նախաձեռնության իրաւունքի հետ միաժամանակ՝ մէկ օրէնսդիր ժողով գոյություն ունենայ միայն։ Ճշմարիտ, կատարեալ ու ամբողջական ժողովրդապետությունը պահանջում է միայն այդ եղանակը։ Բոլոր միւս ձևերը չեն համապատասխանում ժողովրդական իրական չահերին։

Իշխանությունների բաժանման սկզբունքը.— Իշխանությունների բաժանման սկզբունքը այն է, որի տեսակէտով պետության զանազան իշխանությունները պէտք է բաժանուեն մի քանի միմիանցից անկախ մասերի,— օրէնսդիր, գործադիր և դատաստանական։

Այդ թէորիայի պատմական ծագումը սկսում է անգլիական Սահմանադրությունից։ Ամերիկեան յեղափոխությունն ու ֆրանսական յեղափոխությունը այդ սկզբունքը ընդունեցին և այն ժամանակից մինչև այժմ նա նորագոյն սահմանադրության հիմունքներից մէկն է կազմում։

Եթէ մի կառավարության մէջ իշխանությունների բաժանումն չլինի, այն ժամանակ քաղաքական ազատությունը պէտք խափանված նկատել։

Generated on 2016-07-15 10:56 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Արդարև, երբ մի անձի կամ վարչական մի մարմնի մէջ կեդրոնանան մի քանի իշխանութիւններ, օրինակ, գործադիր և օրէնսդիր, այդ դէպքում երկրի օրէնքները կլինեն բացարձակ բռնապետական: Եթէ օրէնսդիր իշխանութիւնը կապուած լինի դատաստանական իշխանութեան հետ և այդ բոլորը ներկայացնէ մի անձն և կամ մի ժողով, քաղաքացիների կեանքն ու ազատութիւնը բռնաբարուած կը լինի։ Կամ եթէ դատաստանական ու գործադիր իշխանութիւնները միացած լինեն, քաղաքացիները իրանց իրաւական գործառնութիւնների մէջ կը կորցնեն իրանց ազատութիւնը, մի խօսքով՝ իշխանութիւնների բաժանումը մի երկրի քաղաքական ազատութեան համար բացարձակ ու էական անհրաժեշտութիւն է, առանց որի բռնակալութիւնն ու կամայականութիւնը պիտի կազմէին ընդհանուր օրէնքը։ Անկախ իշխանութիւնների ժամանակ, ի՞ր քանչիւր իշխանութիւն իր գործունէութիւնը սահմանափակում է իր իրաւասութեան շրջանակում և այդպիսով բռնութիւններն ու ճնշումները դառնում են անկարելի։ Ինչպէս ասացինք, երեք իշխանութիւն պէտք է լինի,—օրէնսդիր, գործադիր և դատաստանական։ Սակայն, այդ իշխանութիւններից միայն օրէնսդիրը էական, առաջնակարգ նշանակութիւն ունի, որովհետև օրէնքների յայտարարութեան իրաւունքը պատկանում է նրան, այսինքն՝ ժողովրդական կամքի ուղղակի արտայայտիչը նա է։ Միւս իշխանութիւնները, գործադիրն ու դատաստանականը, իրանց գործունէութեան մէջ պիտի ղեկավարուին գլխաւորապէս օրէնսդիր ժողովի՝ պարլամենտի մշակած ու գծած օրէնքներով։ Ներկայումս, սակայն, գործնականու-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:57 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

թեան մէջ օրէնսդիր իշխանութեան այդ առաջնակարգ նշանակութիւնը և նրանից անմիջականօրէն բղխող մի շարք հետութիւնները չեն ընդունած և գործադիր իշխանութիւնը եթէ ոչ աւելի՝ գոնէ պակաս նշանակութիւն չունի օրէնսդիրից։

Ներկայումս օրէնսդիր և գործադիր իշխանութիւնների բաժանման ընդունուած սկզբունքից բղխում են հետևեալ կէտերը.—

Ա.—Գործադիր իշխանութիւնը չի կարող իր հրովարտակներով ոչ մեկնաբանել, ոչ փոփոխել և ոչ էլ ջնջել մի օրէնք։

Բ.—Գործադիր իշխանութիւնը չի կարող՝ հրովարտակի միջոցով՝ կանոնաւորել այն խնդիրները, որոնց համար անհրաժեշտ է մի օրէնք։

Այս հետևութիւններով, սակայն, երկու իշխանութիւնների իրաւասութեան սահմանները որոշակի կերպով չեն գծուում։ Կարելի է ասել, որ դրանք ընդհանուր բնոյթ են կրում զանազան երկիրների օրէնսդիր ու գործադիր իշխանութիւնների անջատման սկզբունքի տեսակէտից։

Բայց որպէսզի պարզ ու որոշ լինեն այդ իշխանութիւնների բաժանման սահմանները, նրանց փոխադարձ յարաբերութիւնները, ցոյց տանք այն մի քանի տարբեր ձևերը, որոնց վրայ հիմնուած են օրէնսդիր և գործադիր իշխանութիւնների բաժանումը։

Մի քանի սահմանադրութիւններ աշխատել են, որքան կարելի է, օրէնսդիր և գործադիր իշխանութիւնները իրարից անբողջապէս զատել և դարձընել բոլորովին անկախ։ Իբրև տիպ կարող է ծառայել Միացեալ-Նահանգների այսօրուայ սահմանադրութիւնը։ Բաժանող գծերը հետևեալներն են։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:57 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ա.— Նախարարների ընտրությունը եւ դերը:

Նախարարները գործակալներն են գործադիր իշխանության, որի հետ միասին նրանք կազմում են գործադիր մարմինը։ Իբրև այդպիսին, նրանք չեն կարող միաժամանակ օրէնսդիր ժողովի անդամ լինել։ Սահմանադրության հինգերորդ յոդուածի որակաղրության համաձայն՝ հասարակական պաշտօն վարող ոչ մի անձն չի կարող անդամ լինել օրէնսդիր ժողովներից, խորհրդարան և ծերակոյտ, ոչէ մէկին, քանի նա գտնուում է պաշտօնի մէջ։ Այդ օրէնքը ընդհանուր է ինչպէս նախարարների, այնպէս էլ միւս պաշտօնեաների համար։

Լինելով գործադիր իշխանության գործակալներ, նախարարները, հետևաբար, օրէնսդրական ժողովի մէջ չեն կարող ոչ մուտքի և ոչ էլ խօսքի իրաւունք ունենալ։ Միւս կողմից, օրէնսդիր ժողովի հետ յարաբերության մէջ չլինելով, նրանք կախում ունեն միայն գործադիր իշխանության անուանակրից՝ նախագահից։ Նրանցից իւրաքանչիւրը կառավարում է իրան յանձնուած պաշտօնի գործերը, և այդ գործերից դուրս նա մասնակցում է ընդհանուր քաղաքականության այն չափով միայն, որ չափով նախագահը յարմար է տեսնում։

Նախագահը ընտրուում է ժողովի կողմից երկաստիճան հանրաքէով. նա կազմում է իր կաբինետը, մինիստրական խորհուրդը, որին ծերակոյտը շատ հազուագիւտ պարագաներում միայն չի վաւերացնում։ Նախագահը, ուրեմն, իր կողմից ըստ իր կամքի ընտրում, պահում կամ հրաժարեցնում է նախարարներին։ Սրանք ինչպէս տեսնուում է, կա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:57 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ռավարութեան գործերի ուղղութեան վրայ մասնաւոր կամ հաւաքական ազդեցութիւն չունեն և միաժամանակ քաղաքական պատասխանատուութիւնից ազատ են օրէնսդիր ժողովների առաջ։

Բ. Գործադիր իշխանութիւնը օրենսդրութեան չի մասնակցում.— Դա արդէն բաժանման սկզբունքի արտաքանական հետևութիւնն է։ Միայն օրէնսդիր ժողովն է, որ օրէնսդրական իրաւասութիւն ունի։ Գործադիր իշխանութիւնը օրէնքների առաջարկութեան և նախաձեռնութեան իրաւունքից զուրկ է բոլորովին։ Նա չի կարող ոչ ուղղակի և ոչ էլ կողմնակի՝ նախարարների միջոցով՝ օրէնքի առաջարկներ ներկայացնել։ Սակայն, մի տարօրինակ հակասութեամբ, գործադիր իշխանութիւնը օրէնքների նախաձեռնութիւն չունենալով հանդերձ՝ կարող է արգելք դնել օրէնսդիր ժողովի քուէարկած օրէնքներին և այդպիսով թոյլ չտալ օրէնքի հրատարակութիւնը։ Նախագահի այդ արգելքի, վետոյի իրաւունքը, իհարկէ, դէմ է իշխանութիւնների բաժանման սկզբունքին։ Սակայն վետոից յետոյ, եթէ նոյն օրէնքը օրէնսդիր երկու ժողովների ձայների երկուերրորդ մեծամասնութիւնը գտնէ, ինչ որ դժուար է, այդ դէպքում նախագահը ստիպուած է վաւերացնել։ Ձայների փոքրամասնութեան ժամանակ, օրէնքը այլևս մեռած է համարուում։ Նախագահական այդ վետոյի իրաւունքը հաստատել է ներկայացուցչական ըէժիմի զեղծումների դէմ իբր թէ հակազդեցութեան համար, որպէսզի օրէնսդիր իշխանութիւնը իրան չենթարկէ գործադիր իշխանութիւնը։ Սակայն, այդ հանգամանքը ծառայում է չատ անգամ իբր մի խոչնդոտ երկրի օրէնսդրութեան զարգացման համար, որովհետև ժողովրդա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:57 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

յին խաւերին ինպատ քէարկւած օրէնքները կարող են հանդիպել նախագահի դիմադրութեան։

Վէտոյի իրաւունքը ունենալով հանդերձ՝ նախագահը ժողովները լուծելու իրաւունքը չունի, որը ինքնին բացորոշ բռնաբարումը կլինէր իշխանութիւնների բաժանման սկզբունքին։

Գործադիր իշխանութեան ամենածանր գործողութիւնների համար ամերիկեան սահմանադրութիւնը ծերակոյտին միայն տալիս է մի չարք ստորոգելիներ։ Համաձայն դրանց, վերոյիշեալ գործողութիւնները,— բացի պատերազմի յայտարարութիւնից,— որոնք իրաւական բնաւորութիւն են կրում, պիտի ենթարկւեն ծերակոյտի հաւանութեան և վաւերացման։ Այդ մասին այսպէս է ձևակերպում սահմանադրութեան յօդւածը. «Նախագահը իրաւունք ունի, ծերակոյտի խորհրդով և հաւանութեամբ, դաշինքներ կնքել, անուանակարգել դեսպաններ, հասարարական նախարարներ, պաշտօնեաներ, հիւպատոսներ, բարձրագոյն պալատի դատաւորներ, և այլն»։ Սահմանադրութեան այդ ամբողջ տրամադրութիւնը յարգւում է խստօրէն, բացի նախարարների նշանակումից, որը ծերակոյտը վաւերացնում է սովորաբար առանց մերժելու։ Իր օրէնսդրական և գործադրական իրաւասութիւններով միասին, ծերակոյտը ուրեմն, կազմում է մի առանձնակ կառավարական խորհուրդ, որի իշխանութեան սահմանները բաւական ընդարձակ են։

Գործադիր իշխանութեան առհասարակ բոլոր գործողութիւնների վերահսկողութեան համար գոյութիւն ունի օրէնսդիր ժողովների մշտական յանձնախմբերը, որոնցից մէկը ընտրւում է նոյն ինքն ժողովների կողմից, իսկ երկրորդը՝ նախագահի

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:58 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կողմից։

Այդ յանձնախմբերը նախարարների ունեցած վարչության վրայ անդադրում հսկողություն են գործ դնում և կայացնում են կարևոր որոշումներ։ Այդ կերպով օրէնսդիր իշխանությունը հսկում է գործադիր իշխանության վրայ։ Մնայուն յանձնախմբերը իրաւունք ունեն նոյն իսկ իրանց առջև կոչելու նախարարներին և նրանց հարցուփորձեր ուղղելու իրանց գործունէության եղանակների և ուղղության նկատմամբ։

Այսպէս ինչպէս տեսնում է, իշխանությունների բաժանումը Միացեալ-Նահանգներում տեսականօրէն է միայն, մինչդեռ գործնականության մէջ ընդհակառակն է, երկու իշխանությունների փոխադարձ յարաբերական կապը շատ սերտ լինելով և առաջինը՝ օրէնսդիրը վերհսկողության իրաւունք ունենալով երկրորդի՝ գործադրի վրայ։

Այսպէս է, իր ընդհանուր գծերով, Միացեալ-Նահանգների օրէնսդիր և գործադիր իշխանությունների փոխադարձ յարաբերության ձևը։ Այդ ձևը մուտք է գործել և Ամերիկեան միւս հասարակապետությունների մէջ։ Եւրոպայում, մեծ մասամբ, պարլամենտական կառավարության սիստէմն է որդեգրված, որը շատ ու շատ կողմերով զանազանւում է Միացեալ-Նահանգների Դաշնակցական կառավարության իրաւական բնաւորությունից։

Պարլամենտական կառավարության մէջ՝ օրէնսդիր և գործադիր իշխանությունների միջև այնպէս խիստ բաժանումն չկայ, ինչպէս Ամերիկեան դաշնակցական կառավարության մէջ։ Այստեղ բաժանումը աւելի մեղմ է։ Գործադիր իշխանության պարագլուխը մի թագաւոր և կամ մի նախագահ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:58 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

է, նայելով թէ սահմանադրական միապետութիւն է, թէ հանրապետութիւն։ Եթէ նոյն իսկ այդ պարագլուխը օրէնսդիր ժողովի կողմից ընտրուած էլ լինի, չի կարելի հրաժարեցնել։ Նրա սուրոգելինները գործադիր և օրէնսդիր են։ Օրէնսդրական տեսակէտով իրաւունք ունի՝ ծերակոյտի հաւանութեամբ՝ լուծել ժողովրդական պալատը՝ խորհրդարանը։ Բացի դրանից նա իրաւունք ունի և նախարարական մարմնի միջոցով օրէնքի նախագծեր ներկայացնելու օրէնսդրական ժողովին։

Գործադրական տեսակէտով նրա ունեցած իրաւունքները սահմանափակ են, որովհետև ամենագլխաւոր գործողութիւնների համար, ինչպէս են պատերազմի յայտարարութիւնը, խաղաղութեան, տնտեսական դաշինքների կնքումը, և այլն, օրէնսդրական ժողովի հաւանութիւնը անհրաժեշտ է։ Նախարարների անուանումի իրաւունքը սկզբունքով պատկանում է նրան, սակայն, ընդունուած սովորութեան համաձայն՝ նա ընտրում է միայն մի նախարարապետ, որը անպայման խորհրդարանի մեծամասնութեան վստահութիւնը պիտի վայելէ։ Միւս նախարարները ընտրւում են այդ նախարարապետի կողմից, սակայն, դրանք էլ, ինչպէս ինքը նախարարապետը, խորհրդարանի մեծամասնութեան վստահութիւնը պիտի վայելեն։

Նախարարութեան դերը բաւական մեծ է։ Նա թէև գործադիր իշխանութեան բարձրագոյն գործակալութիւնն է համարւում, սակայն, գործադրական տեսակէտով իրական հեղինակութիւն ունի։ Օրէնսդիր և գործադիր իշխանութիւնների միջև նա կատարում է միջնորդի դեր, օրէնսդիր ժողովի նիստերին մասնակցում և խօսք է վերցնում՝ գոր-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:58 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ծաղիր իշխանութեան պետի օրէնքի նախաձեռնութիւնը պաշտպանելու և կամ ուղղուած հարցերին ու հարցապնդումներին պատասխանելու համար։ Միւս կողմից, նա կազմում է նախարարական խորհուրդ՝ հանրապետութեան նախագահի կամքագաւորի նախագահութեան տակ, կառավարութեան ընդհանուր քաղաքականութեան ուղղութիւնը որոշելու համար։

Բացի դրանից, նախարարութիւնը կազմում է մի կաբինետ՝ որ զբաղւում է ընթացիկ հարցերի քննութեամբ։ Շնորհիւ այդ հանգամանքի, պարլամենտական կառավարութիւնը կոչւում է կաբինետի կառավարութիւն։ Գործադիր իշխանութեան պարագլուխը անպատասխանատու լինելով, նրա իւրաքանչիւր գործողութիւնը ստորագրւում է նախարարութեան կողմից։ Ցիշեալ բոլոր պատճառներով նախարարութիւնը օրէնսդիր ժողովի՝ պարլամենտի առաջ հաւաքաբար դառնում է պատասխանատու։ Նա պարտաւորւում է իր գործողութիւնների համար պարլամենտի հարցապնդումներին բաւարարութիւն տալ, հակառակ դէպքում մեծամասնութեան քւէով կարող է անմիջապէս հրաժարեցւել։ Այդպիսով, ուրեմն, օրէնսդիր ժողովը կարող է վերհսկողութիւն գործ դնել գործադիր իշխանութեան վրայ և ստիպել նրան վտանգաւոր միջամտութիւնների չձեռնարկելու՝ օրէնսդիր իշխանութեան հպատակեցնելու դիտաւորութեամբ։

Պարլամենտական կառավարութեան մէջ օրէնսդիր և գործադիր իշխանութիւնների բաժանման սահմանները բացատրելուց յետոյ, այստեղ աւելորդ չենք համարում յիշեցնել, որ պարլամենտական կառավարութիւնը չպէտք է շփոթել ներկայացուց-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:58 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

չական կառավարութեան հետ։ Մի կառավարութիւն կարող է ներկայացուցչական լինել, բայց պարլամենտական չլինել։ Այսպէս, Միացեալ-Նահանգների կառավարութիւնը ներկայացուցչական է, որովհետև օրէնսդիր ժողով ունի, բայց պարլամենտական չէ, որովհետև, ինչպէս բացատրեցինք, իշխանութիւնների բացարձակ բաժանման սկզբունքի վրայ է հիմնուած և նախարարութիւնը չունենալով մասնակցութիւն օրէնսդիր ժողովին, պատասխանատու չէ նրա առջև, այլ նախագահի առջև միայն։

Պարլամենտական կառավարութիւն գոյութիւն ունի այժմ Եւրոպայի գրեթէ բոլոր երկիրներում։ Ամերիկեան կառավարութեան և եւրոպական պարլամենտական կառավարութեան կողքին կայ կառավարական մի այլ ձև, որ գոյութիւն ունի Զուիցերիայում։ Այնտեղ սկզբում գործադիր իշխանութիւնը կազմում էին 5, 7 կամ 9 նախարարներ, որոնք ընտրւում էին օրէնսդիր եզակի ժողովի կողմից, որը միաժամանակ կոչւում է և մեծ Խորհուրդ։ Իւրաքանչիւր նախարար կառավարում է, իր մասնաւոր գործերը և ընտրւում էր մի որոշ ժամանակամիջոցի համար, ընդհանրապէս օրէնսդիր ժողովի մէկ շրջանի համար։ Նրանք չէին կարող հրաժարեցուել, չէին կարող օրէնսդիր ժողովի անդամ լինել, թէև ներկայանալ, նախագծեր առաջարկել և վիճաբանութեան մասնակցել կարող էին։ Սակայն, իրանց առաջարկների վրայ պնդել չէին կարող և եթէ ժողովը հակառակէր նրանց կը հպատակւէին։

Սակայն, մի քանի տարուց ի վեր յայտնի փոփոխութիւն է կատարուել։ Նախարարները յաճախ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:58 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ընտրում են ոչ թէ օրէնսդիր ժողովի կողմից, այլ ուղղակի ժողովրդի կողմից։ Միայն ութ կանտոններ կան, ուր նրանք ընտրում են ժողովի կողմից։ Ինչ որ կանտոնների վերաբերմամբ է, նոյնն է և՛ ամբողջ համադաշնակցութեան համար։ Դաշնակցական խորհուրդը, որ կազմում է գործադիր իշխանութիւնը, ընտրում է 3 տարուայ համար դաշնակցական օրէնսդիր ժողովի կողմից։ Այս վերջինը բաղկացած է երկու պալատից՝ Ազգային խորհուրդից և Պետական խորհուրդից։ Առաջինը ընտրում է 3 տարուայ համար, իւրաքանչիւր կանտոնի ընտրողների կողմից ուղղակի հանրաքէով։ Երկրորդը ընտրում է իւրաքանչիւր կանտոնի ժողովրդային ժողովի կողմից 5 տարուայ համար և բաղկացած է 44 անդամներից, իւրաքանչիւր կանտոն երկու անդամ ընտրելով։ Դաշնակցական խորհուրդը նախարարների մի խորհուրդ է պարզապէս, որ կազմած է 7 անդամներից և որի նախագահը, իբր համադաշնակցութեան նախագահ, ընտրում է միայն մէկ տարուայ համար և չի կարող վերընտրեալ լինել հետևեալ տարին։ Նա պատուոյ առանձնաշնորհումներ ունի միայն, ուրիշ ոչինչ։ Նախարարները դաշնակցական օրէնսդիր ժողովի անդամ չեն կարող լինել, բայց գործօն մասնակցութիւն կարող են ունենալ վիճաբանութիւններին։ Օրէնսդրական տեսակէտով նրանք նախաձեռնութեան իրաւունք ունեն և կարող են օրէնքի առաջարկներ ներկայացնել։ Նախարարը վէտօի իրաւունք չունի և չի կարող ոչ իսկ լուծել կամ արձակել օրէնսդիր ժողովի գումարումը։

Ինչպէս նկատում է, նախարարներից զատ գործադիր իշխանութեան ուրիշ անանձնակիր չկայ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:59 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

իրաք։ Նոյն իսկ օրէնքի նախաձեռնութեան կողմից, նրանցից ամեն մէկը, միւսներից անկախաբար, կարող է դաշնակցական ժողովին ներկայացնել իր նախագիծը, և պատահել է, որ դաշնակցական խորհուրդի մէկ անդամի օրէնսդրական առաջարկը քննադատել է միւս անդամների կողմից։

Դաշնակցական խորհուրդի, ուրեմն, գործադիր իշխանութեան իրաւասութեան սահմանների մէջ մտնում են արտաքին գործերի ղեկը, հեռագիրը, պօստը և մի շարք այլ ճիւղեր։

Այսպէս ուրեմն, Զուիցերական կառավարութեան ձևով օրէնսդիր իշխանութիւնը առաջնակարգ նշանակութիւն ունի և գործադիր իշխանութիւնը աւելի երկրորդական տեղ է բռնում։ Ինչ ասել կուզէ, որ ժողովրդապետութիւնը արտայայտում է միայն այդ դրութեամբ։ Միացեալ-Նահանգների նախագահի վետօի իրաւունքը օրէնսդիր ժողովի քուէարկած ոչէ մի օրէնքի դէմ և պարլամենտական կառավարութեան մէջ նախագահի կամ թագաւորի օրէնսդիր ժողովի լուծման իրաւունքը հակառակ են ժողովրդական միահեծանութեան սկզբունքին, ըստ որում ժողովրդական հանրաքուէով ընտրուած օրէնսդիր ժողովն է միայն, որ ներկայացնում է ժողովրդական ուղղակի կամքը, և իրրև այդպիսին, նա երբէք չի կարող ենթարկուել գործադիր իշխանութեան։

Բացի այս երեք տարբեր ձևերից, կայ և մի այլ ձև, որ իր ընդհանուր կողմերով նման է Զուիցերականին. կարելի է ասել, որ շատ քիչ տարբերութիւն ունի նրանից։ Կառավարական այս վերջին ձևը գործադիր իշխանութեան զրկում է անկախութիւնից և ամբողջապէս հպատակեցնում է

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:59 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

օրէնսդիր իշխանութեան։ Ներկայացուցչական կառավարութիւնը այդ սիստեմի մէջ բաղկացած է ոչ թէ երկու, այլ մէկ օրէնսդիր ժողովից, որը ընտրւում է ուղղակի, գաղտնի, հաւասար և ընդհանուր ձայնատուութեան եղանակով և որը ներկայացնում և գործադրում է ժողովրդական կամքը՝ ուղղակի կառավարութեան պէս, միայն այն զանազանութեամբ, որ այնտեղ ամբողջ ժողովուրդը ուղղա'կի կերպով է վարում պետական գործերը, իսկ այստեղ ընտրւած անդամներից կազմւած ներկայացուցչական, պատգամաւորական ժողովն է, որ կատարում է նոյն դերը։ Այդ ժողովը ազգային միա'կ ներկայացուցչութիւնն է և նրան հակակշռող ոչ մի այլ իշխանութիւն գոյութիւն չունի։ Նա միայն կարող է ճշմարտապէս խօսել և վճռել ժողովրդի անունով։ Գործադիր իշխանութեան գործակալները ընտրւում են նրա կողմից և կարող են հրաժարեցւել նրա կամքով։ Սահմանադրական իրաւունքի հարցերով մասնաւորապէս զբաղւող մի յայտնի գրող հետևեալ կերպով է բնորոշում օրէնսդիր իշխանութեան էութիւնը. «Ոչ ոք, ասում է նա, չի կարող ժխտել, որ ժողովրդի ներկայացուցիչները կառավարական բոլոր հարցերում գերագոյն հեղինակութիւն են ներկայացնում և վարչութիւնը՝ կառավարութեան մէջ՝ պարզապէս բիւրօների աշխատանքն է։ Օրէնսդրութիւնը առաջնակարգ ոյժն է։ Օրէնք կազմելու իշխանութիւնը իր բնութեամբ և էութեամբ, կառավարելու իշխանութիւնն է և այդ իշխանութիւնը պատկանում է ներկայացուցչական ժողովին։ Սա իրաւունք ունի իր մշտական և խիստ հսկողութեան տակ ունենալ գործակալներ, որոնք յանձնառու լինեն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:59 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

գործադրելու իր կամքը՝ պատասխանատու հանգամանքներով»։

Օրէնսդիր իշխանութեան էական նշանակութիւնը ընդունելով և գործադիր իշխանութեան երկրորդական կարևորութիւն տալով հանդերձ, մի չարք մտածողներ կողմնակից չեն, որ գործադիր իշխանութեան անդամներ ընտրեն օրէնսդիր ժողովի կողմից։ Ֆրանսիական յեղափոխութեան յայտնի դէմքերից մէկը, օրինակ, ասում է այդ առթիւ. «գործադիր իշխանութեան գործակալները պէտք է էականօրէն ենթարկուեն օրէնսդրական իշխանութեան։ Գործադիր խորհուրդը պէտք է լինի այն ձեռքը, այն աչքը, որոնցով օրէնսդիրները կարողանան գործել և քննել իրանց օրէնքների գործադրութեան մանրամասնութիւնները և ստեղծուած արդիւնքները։ Սակայն, ազատ մի ժողովրդի հաստատութիւնները չեն կարող ստրուկ մի հպատակութեան պատկերը ընծայել։ Եթէ գործադիր խորհրդի անդամները օրէնսդիր մարմնի գործակալներն են, չեն կարող միաժամանակ նրա ստեղծագործութիւնը լինել։ Նա պէտք է ստիպէ նրանց հնազանդուել, բայց օրէնքով նրանք պէտք է ընտրուեն ժողովրդից և ոչ թէ օրէնսդիր ժողովից քանի որ նրանք ժողովրդի գործակալներն են և ոչ թէ երեսփոխանների, այնպէս որ նրանց կամայական հրաժարեցումը կարող էր մի մեծ ստրկական հպատակութիւն լինել»։

Անշուշտ, գործադիր իշխանութեան գործակալների ընտրութիւնը ժողովրդի կողմից աւելի նախընտրելի ու նպատակայարմար է։ Այդ պարագան հաստատուն է և այն սկզբունքին, ըստ որում բոլոր պաշտօնեաները ընտրուում են ժողովրդից։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 10:59 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ներկայումս ժողովրդական բոլոր յառաջադէմ կուսակցութիւնները աշխատում են իրագործել կառավարական այս վերջին սիստեմը, որ իրանց քաղաքական ծրագրի անբաժան մասն են արել։

Գործադիր և օրէնսդիր իշխանութիւնների այս տարբեր յարաբերական ձևերը ցոյց տալուց յետոյ, ընթերցողի համար դիւրին կլինէր հասկանալ Թիւրքիայում Միդհատեան սահմանադրութեան գործադիր և օրէնսդիր իշխանութիւնների յարաբերական գծերը։ Այստեղ օրէնսդիր իշխանութիւնը կեդրոնացած է գործադիր իշխանութեան պետի՝ սուլթանի անձնաւորութեան մէջ և ներկայացուցչական ժողովը, ընտրուած անուղղակի հանրաքէով, զուրկ է օրէնսդրական իրաւունքներից և հետևաբար հպատակուած է գործադիր իշխանութեան։ Այդ տեսակէտից Միդհատեան սահմանադրութիւնը նուիրագործել է բռնակալութիւնն ու կամայականութիւնը։

Դատաստանական իշխանութիւն.— Դատաստանական իշխանութիւնն էլ, ինչպէս ասացինք, կազմում է մի անկախ իշխանութիւն, առաջնորդուելով միայն այն օրէնքներով, որ բղխում են՝ օրէնսդիր ժողովից։ Նրա գոյութեան իրաւունքը պայմանաւորուում է օրէնքների զանցառութիւնը զսպելու և ընկերութեան անդամների մէջ ծագած ընդհարումներին մի խաղաղ լուծումն տալու անհրաժեշտութեան մէջ։ Դատաստանական իշխանութիւնը, հետևաբար, պէտք է լինի անկախ ամեն մի ճնշումից ու ազդեցութիւնից, որպէսզի կարողանայ ըստ արժանւոյն կատարել իր անկողմնակալ դերը։ Այդ սկզբունքը ընդունած և յայտարարուած է այժմ բոլոր լայն սահմանադրական կարգեր ունեցող եր-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 11:08 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կիրներում։ Դատաստանական իշխանութեան անկախութիւնը ենթադրում է երկու անհրաժեշտ պայման,— դատաւորների, իրաւարարների ընտրութիւնը ժողովրդի կողմից և նրանց անփոփոխելիութիւնը։ Ներկայումս թէև սկզբունքով չատ տեղ ընդունուած, ճանաչուած է դատաստանական իշխանութեան անկախութիւնը, այնուամենայնիւ, նա ենթարկուած է գործադիր իշխանութեան, այն պարզ պատճառով, որ դատաստանական պաշտօնեաները նշանակւում են գործադիր իշխանութեան կողմից, մի հանգամանք, որ պաշտօնեաներին ենթարկում է ադմինիստրացիայի՝ գործադիր իշխանութեան ազդեցութեան։ Այդպիսով արդարադատութիւնը փոխանակ անաչառ, անկոմնակալ, իրաւունքի հիմքերի վրայ մնալու, դառնում է կողմնապահ, ընդունում է դասակարգային տիրապետութեան մի եղանակ։ Եթէ ժողովրդական միահեծանութեան սկզբունքի համաձայն, բոլոր իշխանութիւնները բղխում են ժողովրդից, ապա դատաստանական պաշտօնեաները ուղղակի կերպով պիտի ընտրեն ժողովրդի կողմից։ Այդ պայմանով միայն պաշտօնեաների անփոփոխելիութիւնն էլ կարող է օգտակար նշանակութիւն ունենալ. այլապէս, երբ դատաւորները գործադիր իշխանութեան կողմից ընտրեն և միաժամանակ անփոփոխելի լինեն, անիրաւութիւնը կարող է յարատև բնաւորութիւն ստանալ։ Ընտրութիւնը ժողովրդի կողմից կատարելով, ոչ գործադիր և ոչ էլ օրէնսդիր իշխանութիւնները, իրաւունք չունեն հրաժարեցնել դատական պաշտօնեաներին։ Նրանց անփոփոխելիութիւնը այդ դէպքում միայն համապատասխանում է ճշմարիտ արդարադատութեան հիմունքներին։ Բայց,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 11:08 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ինարկէ, այդ անփոփոխելիութիւնը չպէտք է բացարձակ մի բնաւորութիւն ունենայ։ Դրա համար նախապէս որոշ պայմաններ պէտք է գծուեն, մի քանի պարագաներ նախատեսուեն, որոնք են՝ անարժանաւորութիւն, անընդունակութիւն, չարաչար պաշտօնավարութիւն, և այլն։ Առանց այդ հանգամանքների նախաքննութեան, դատաստանական պաշտօնեաների անփոփոխելիութիւնը կարող էր բռնապետական և կամայական դատական վարչութիւն ստեղծել։

Դատաստանական պաշտօնեաների ընտրութիւնը ժողովրդի կողմից ունի, անշուշտ, մեծ նշանակութիւն։ Նա պաշտօնեային դարձնում է, բոլորովին անկախ գործադիր իշխանութեան հանդէպ։ Միւս կողմից, սակայն, ժողովրդական ընտրութիւնը պաշտօնեային, դատաւորին կարող է ենթարկել ընտրական մարմնի ազդեցութեան։ Այն երկրում, ուր քաղաքական առաքինութիւնն ու ազնուութիւնը զարգացած չեն, ուր դեռ քաղաքական գիտակցութիւն և ընտրական լաւ բարքեր չկան, այդ ազդեցութիւնը կարող է, բնականաբար, լաւ արդիւնքներ չտալ։ Մանաւանդ եթէ ընտրուած դատաւորը զուրկ է անհրաժեշտ գիտական մասնաւոր ծանօթութիւններից ու դրական փորձառութիւնից, հետևանքները աւելի վատ կը լինեն։ Այդ անյարմարութիւնից խուսափելու համար պէտք է աշխատել կանխօրօք որոշ երաշխաւորութիւններ ստեղծել՝ անօրինական ընտրութիւնը խափանելու և ազդեցութեան հետևանքները չէզոքացնելու համար։ Ներկայումս շատ իրաւագէտներ պատճառաբանելով վերոյիշեալ անպատեհութիւնները, առաջարկում են, որ դատաստանական պաշտօնեաների

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 11:08 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նշանակումը գործադիր իշխանութեան իրաւասութեան սահմանների մէջ լինի. սակայն, այս դէպքում ժողովրդապետութեան հակառակ պէտք է գնալ, որովհետև դրանով դատաստանական իշխանութիւնը կը հպատակուէր գործադիր իշխանութեան, իսկ այդ հանգամանքը արդար իրաւարարութիւնը չէր կարող երաշխաւորել, ինչպէս որ այդ դիտել ենք վերևում։

Ինչ որ ասում ենք պատժական դատարանների համար, նոյնը կարող ենք ասել և մասնաւոր դատարանների համար, ինչպէս են՝ վաճառականական դատարան, աշխատանքի իրաւարար դատարաններ, որոնց յանձնուած է առանձին արհեստական հարցերի քննութիւնը։

Ներկայումս զանազան երկիրներում զանազան եղանակով է լինում դատաստանական պաշտօնեաների ընտրութիւնն ու անփոփոխելիութիւնը։ Միացեալ-Նահանգներում դաշնակցական դատարանի դատաւորները նշանակւում են՝ ժամանակաւոր կերպով՝ հանրապետութեան նախագահի կողմից. իսկ նահանգային դատաւորները ընտրւում են ժողովրդի կողմից։ Զուիցերիայում նոյնպէս նոյն դրութիւնը գոյութիւն ունի, միայն այն զանազանութեամբ, որ այստեղ դաշնակցական դատարանի դատաւորները ընտրւում են Դաշնակցական Խորհուրդի կողմից, որ, ինչպէս ասել ենք, նախարարների մի խորհուրդ է պարզապէս։

Ֆրանսիայում և ուրիշ մի քանի երկիրներում, դատաւորները նշանակւում են գործադիր իշխանութեան կողմից և անփոփոխելի են։ Այս եղանակը, ինչպէս ցոյց տւինք, հակասութեան մէջ է դատաստանական անկախութեան ոգրբունքի հետ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 11:09 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

և ճշմարիտ ու արդար իրաւարարութիւն չի կարող երաշխաւորել՝ դատաստանական իշխանութեան հպատակեցնելով գործադիր իշխանութեան։

Ինչ վերաբերում է դատաստանական և գործադիր իշխանութիւնների փոխադարձ սիւս յարաբերութեանց, առաջինը, բնականաբար չի կարող ենթարկուել երկրորդին և դատական գործերի քննութեան մէջ ու նրա հրահանգով ոչէ մի դատի այս կամ այն ուղղութիւնը տալ։ Դատաստանական իշխանութիւնը լիովին ազատ ու անկախ է դատական գործերի մէջ ոչէ արտաքին մի մասնակցութիւնից։ Իր վարչական իրաւասութեան մէջ մտնելով օրէնքի և իրաւունքի պաշտպանութիւնը, նա առանց ոչէ խտրութեան ու բաշտոիկ մի հանգամանքի, պէտք է իր դատական արդարացի ու բաւարար լուծումը, վճիռը տայ՝ լինի այդ մի պետական պաշտօնեայի գործողութեան նկատմամբ, թէ երկու պարզ անհատների մէջ ծագած խնդիրների մասին։ Ներկայումս, սակայն, վեհապետը անպատասխանատու ճանաչելով, չի կարող օրինականապէս հետապնդուել դատարաններում։ Մի քանի երկրներում, պետական պաշտօնեաները նոյնպէս, իրանց անձնական անօրինական գործողութիւնների համար չեն դատուում նոյն կերպով, ինչպէս որ ընկերութեան այլ անդամները. դա, իհարկէ, մի առանձնաշնորհում է, որ հակառակ է արդար իրաւարարութեան սկզբունքին, ըստ որում հաւասար և միատեսակ արդարադատութիւն պէտք է լինի ընկերութեան բոլոր անդամների համար, առանց դասակարգի և սեռի խտրութեան։

Օրէնսդիր և դատաստանական իշխանութիւնների փոխադարձ յարաբերութիւններից երեք գլխա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 11:09 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

թեան։ Ներկայումս ծերակոյտը միայն այդպիսի իրաւաբանութեան իրաւունք ունի։

Դատաստանական իշխանութիւնը կարող է և՝ սահմանադրական օրէնքների արժէքը վիճելի նկատել, առանց սակայն չեղեալու նրանից, և նոր օրէնքների հրատարակութեան համար առաջարկներ ներկայացնել օրէնսդիր իշխանութեան։ Ներկայումս նոյնիսկ այդ իրաւունքը ճանաչուած և գործադրուում է դատաստանական իշխանութեան կողմից։

ՔԱՂԱՔԱԿԱՆ—ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Նորաբոյն սահմանադրական իրաւունքը այս խորագրի տակ հասկանում է այն բոլոր ազատութիւնները, որոնք անհատի զարգացման և կատարելագործութեան համար անհրաժեշտ պայմաններ են։ Անհատը պէտք է լիակատար իրաւունք ունենայ ազատօրէն զարգացնելու և մշակելու իր ֆիզիկական, բարոյական և մտաւորական կարողութիւնները, առանց վնասելու իր շրջապատին։ Այն ինչ որ նրա մասնաւոր կեանքը, կարծիքը և խիղճը են կազմում, պէտք է զերծ լինեն ամեն կաշկանդումից, կամայականութիւնից և բռնութիւնից։ Նա պէտք է ունենայ խօսքի, գրչի լայն ազատութիւն։ Իբրև մի քաղաքական կենդանի, ինչպէս ասում է յոյն փիլիսոփայ Արիստոտէլը, նա պէտք է ընկերութեան մէջ ապրի, գործէ և գոհացում տայ իր բոլոր կենսական պահանջներին։ Եւ դրա համար անհրաժեշտ է, որ գոյութիւն ունենան մամուլի, հաւաքումների և ընկերակցութեաց ընդարձակ ազատութիւններ։

Քաղաքական-քաղաքացիական այս ազատու-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 11:09 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

թիւնները հոչակեցան Ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան ժամանակ, «Մարդու և Քաղաքացու Իրաւունքների Յայտարարութեամբ»։ Այնուհետև եւրոպական բոլոր սահմանադրութիւնները լնդունեցին այդ սկզբունքը, որ ներկայումս ժողովրդական միահեծանութեան և իշխանութիւնների բաժանման սկզբունքների հետ միասին՝ նորագոյն սահմանադրական իրաւունքի հիմքն են կազմում։

Անձի եւ բնակարանի անձեռմխելիութիւն.— Անձի և բնակարանի անձեռմխելիութիւնը անհատի ազատութեան ամենաէական երաշխաւորութիւններից մէկն է։ «Մարդու և Քաղաքացու Իրաւունքների Յայտարարութիւնը» մասնաւոր յօդուածներով ճշտել է այդ երաշխաւորութիւնը։ Բելգիական սահմանադրութիւնը ևս գեղեցիկ մի սահմանաւորումն է տուել այդ մասին։ Սահմանադրութեան 7-րդ յօդուածը ասում է.— «Անհատական ազատութիւնը երաշխաւորուած է։ Ոչ մէկին հետապնդել կարելի է միայն օրէնքի նախատեսած պարագաների մէջ և նրա բնորոշած ձևով։ Բացի բացայայտ յանցանքի (flagrant délit) դէպքից, ոչ մէկին կարելի է ձերբակալել միայն դատաւորի պատճառաբանեալ վճռագրով։ Բնակարանը անձեռմխելի է։ Ոչ մի այցելութիւն չի կարող տեղի ունենալ, եթէ ոչ միայն օրէնքի նախատեսած պարագաների մէջ և նրա սահմանած ձևով»։ Անհատը, ուրեմն, պէտք է զերծ մնայ կառավարութեան կամայական ճնշումներից։ Նրա բնակարանը նոյնպէս, պէտք է ազատ մնայ ոստիկանութեան կամայական խուզարկութիւններից։ Առանց դրան, ինչպէս շատ գեղեցիկ կերպով ասում է Բենիամին դը Կոնստանը, մարդկանց համար ոչ լաղաղութիւն, ա՛չ արժա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 11:09 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նապատուութիւն և ոչ էլ երջանկութիւն կարող է լինել։ «Երբ կամայականութիւնը,— չարունակում է նա, - հալածում է մի անհատի, ամբողջ ընկերութիւնն է, որ տուժում է դրանից, որովհետև քաղաքացիական երաշխաւորութիւնները այլևս վերանում են»:

Անգլիայում անհատի անձն ու բնակարանը լիովին անձեռնխելի են։ 1679 թուականին, պարլամենտը քարկել է habeas corpus-ի ակտը, ըստ որում առանց դատական օրինական վճռագրի՝ ոչ մի անհատ չի կարող ձերբակալուել և բանտարկուել։ Այն դատաւորը կամ պաշտօնեան, որ անտես կառնէ այդ օրէնքը, ստիպուած է 500 ոսկու տուգանք վճարել։ Այդ տրամադրութեամբ, անգլիացիք ընդունել են պաշտօնեաների պատասխանատուութիւնը։ Ամեն մի պաշտօնեայ, երբ անհատի ազատութեան դէմ ապօրինի միջոցների կը դիմէ, պատասխանատու է օրէնքի առաջ։ Աւելի և.ս. պաշտօնեաների կամայականութեան դէմ եղած դիմադրութիւնը կատարելապէս օրինական մի միջոց է նը-կատուում Անգլիայում։ Եթէ այդ դիմադրութեան ժամանակ վարդապանութիւն պատահի, լիովին արդարանալի է: Հէնց այս պարագան է, որ Լորդ Չէթէմին իրաւունք է տուել յայտարարելու թէ՝ «my home is my castle», այսինքն՝ իմ տունը իմ բերդն է, ոչ թէ նրա համար, որ ամրութիւններով պաշտպանուած է, այլ որովհետև թագաւորը չի կարող այնտեղ մտնել»։

Աւելորդ է ասել թէ՝ Թուրքիայում անձի և բնակարանի ապահովութեան ոչ մի երաշխաւորութիւն գոյութիւն չունի։ Այստեղ թագաւորում է զապթիեի սանձարձակ կամայականութիւնը։ Ամեն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 11:10 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

բոպէ «օսմանեան փադիշահի հպատակների» կեանքը և բնակարանը վտանգի տակ են. այդ է պատճառը, որ օսմանեան պատմութիւնը տարիներից ի վեր իր զանազան ցեղերի ապստամբութիւններն է արձանագրում։

Որպէսզի անձի և բնակարանի անձեռմխելիութիւնը յարգւի և ապահովւի պաշտօնեաների կամայականութեան դէմ, անհրաժեշտ է, որ այս վերջինների պատասխանատուութեան սկզբունքը ընդունւի։ Եթէ պաշտօնեան, ինչ վարչական դիրք և հեղինակութիւն էլ որ ունենայ, իմանայ, որ օրէնքի ոտնահարման դէպքում ինքը պիտի ստանայ իր արժանի պատիժը, այն ժամանակ նա չի յանդգնի ապօրինի քայլ առնելու։

Մամուլի ազատութիւնը.— Մամուլը, ասում են, հասարակական չորրորդ իշխանութիւնն է։ Նա է պատրաստում հասարակական կարծիքը և ղեկավարում այն բոլոր հոսանքները, որ ստեղծւում է ընկերութեան մէջ։

Մամուլի ազատութիւնը ժողովրդական միահնձանութեան անհրաժեշտ լրացուցիչն է կազմում։ Ոչ մի ճնշում, կաշկանդում չպէտք է գործադրւի նրա դէմ։ Նրա միջոցով հասարակութիւնը պէտք է իրազեկ լինի քաղաքական, տնտեսական և ընկերային բոլոր երևոյթներին։ Լինելով արտայայտիչը, ճշմարիտ թարգմանը հասարակական բոլոր զանգւածների, նա պէտք է լիակատար ազատութիւն ունենայ պաշտպանելու նրանց շահերը։ Ճշմարիտ ժողովրդապետութեան պահանջն է այդ, որ նորագոյն սահմանադրական իրաւունքը բարձրաձայն հռչակել է։

Մամուլի միջոցով է, որ մատնանշւում են

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 11:10 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

զատ քննադատութեան կ'ենթարկեն: «Վիճաբանութիւնից լոյս է ծագում», —ասում են ֆրանսիացիք. իսկ դա հնարաւոր է միայն այն ժամանակ, երբ մամուլը ազատ է։ Հասարակութիւնը կարող է ազատ քննութեան ենթարկել գոյութիւն ունեցող ըմբռնումները և ըստ այնմ որոշ ուղղութիւն և դիրք բռնել։

Մամուլի ազատութեան դէմ ձեռք առնուած ամենամիջոց ժողովրդական ազատութեան բռնաբարումն է նշանակում: Եւ փոլծը ցոյց է տալիս, որ որքան մի երկրում մամուլը կաշկանդուած է, այնքան նա աւելի մեծ ազդեցութիւն ունի հասարակութեան վրայ։ Այն երկիրներում, ուր՝ ընդհակառակը՝ մամուլը չափազանց լայն ազատութիւն է վայելում, այնքան աւելի նուազ է նրա ազդեցութիւնը ժողովրդի վրայ: Ուրեմն, ոչ մի պատճառ չկայ, որ մամուլը կաշկանդի:

Թիւրքիայում ամեն մէկը մեզանից գիտէ, թէ որքան արգելքներ ու սեղմումներ կան մամուլի դէմ։ Գրաքննութիւն, դրամական երաշխաւորութիւն, տուգանք, խմբագիրների բանտարկութիւն, և այլն, և այլն, մամուլի ազատութեան դէմ ընդունուած սոլորական միջոցներն են։

Ընկերակցութիւնների ազատութիւնը. — Ներկայ հասարակական կարգերի մէջ, անհատը միայնակ ոչ մի դեր չի կարող խաղալ։ Նա հազիւ թէ կարող է զբաղուել իր անձնական, սեփական շահերով, բայց այն ինչ որ կապուած է ընդհանրութեան հետ, քաղաքական, տնտեսական, ընկերային այն բոլոր հարցերը, որոնց լուծման համար հարկաւոր է հաւաքական ոյժ, նախաձեռնութիւն, անհատը անզօր է իր ինքնուրոյն ճիգերով ի գլուխ հանել։ Դրա հա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 11:10 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

մար նա պէտք է իր ոյժերը միացնէ ուրիշների ոյ-
ժերին։ Իսկ դա կարելի է միայն կազմակերպական
ճանապարհով, հաւաքական գործունէութեան ձան-
քերով. մի խօսքով՝ ընկերակցութիւնների միջո-
ցով։ Որքան մի երկրի տնտեսական կեանքը զար-
գացած է, որքան աճում է աշխատանքի բաժանու-
մը, այնքան աւելի նւազում է անհատի արտադը-
րական ոյժի նշանակութիւնը։ Նոյնը կարելի է ա-
սել և՛ քաղաքական կեանքի նկատմամբ։ Որքան որ
տարածւում են հաւասարութեան սկզբունքները,
որքան որ աճում է ժողովրդի իշխանութիւնը, մի
խօսքով՝ որքան որ ռամկավարութիւնը յաղթանա-
կում է, նոյնքան անհատի խաղացած դերը նը-
ւազում է։ Տնտեսական և քաղաքական ասպարէ-
զում անհրաժեշտ պէտք է զգացւում հաւաքական
հախանձեռնութեան, ընդհանուր գործունէութեան։
Հետևաբար, քաղաքացիները պէտք է ազատ իրա-
ւունք ունենան կազմակերպելու, իրանց ոյժերը
միացնելու և հաւաքականօրէն գործելու։ Նրանք
պէտք է ստեղծեն տնտեսական, քաղաքական ըն-
կերակցութիւններ, որպէսզի մի ացեալ կերպով
պաշտպանեն իրանց իրաւունքները։ Բանւորները,
օրինակ, պէտք է իրաւունք ունենան արհեստակ-
ցական միութիւններ, գործակցական կազմակեր-
պութիւններ հիմնելու, որպէսզի նրանց միջոցով
կարողանան իրանց տնտեսական կացութիւնը բար-
ւոքել։ Նրանք պէտք է իրաւունք ունենան նոյն-
պէս քաղաքական հողի վրայ կազմակերպելու, որ-
պէսզի խորհրդարանի միջոցով կարողանան ընկե-
րային բարեկարգութիւններ, քաղաքական իրա-
ւունքներ ձեռք բերել։

Ընկերակցութիւնների ազատութիւնը ներկա-

Generated on 2016-07-15 11:10 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

յումս բոլոր ռամկավարական սահմանադրութիւն-ների կողմից ընդունած է։ Երկար ժամանակ, քաղաքական ընկերակցութիւնների կազմութիւնը արգիլած էր, որովհետև այն սխալ կարծիքն էր տիրապետում թէ՝ կազմակերպված կառավարութեան մէջ, քաղաքական ընկերակցութիւնը մի նոր կառավարութիւն կարող էր լինել։ Փորձը ցոյց տուեց, սակայն, որ այնտեղ ուր սահմանադրական իրաւակարգ է հաստատուում, ուր հանրաքվեով է ընտրուում օրէնսդիր իշխանութիւնը, քաղաքական իշխանութիւնը, քաղաքական ընկերակցութիւնը յեղափոխական միջոցների չի դիմում՝ իր նպատակները իրագործելու համար։ Ընդհակառակը, քաղաքական մարմինների գոյութիւնը պարլամենտական կեանքի ներդաշնակ ու կանոնաւոր զարգացման համար բացարձակ անհրաժեշտութիւն է դառնում։ Քաղաքական կուսակցութիւնները բիրտ ոյժի, դաւադրութեան դիմում են այն ժամանակ, երբ մի երկրում քաղաքական ազատութիւն գոյութիւն չունի։ Բռնապետութիւնը բիրտ ոյժ է գործածում, դրա համար էլ կուսակցութիւնները ապստամբական միջոցներ են գործադրում նրան տապալելու համար։ Կուսակցութիւնները, ուրեմն, պէտք է ազատ գոյութեան իրաւունք ունենան, որպէսզի օրինական միջոցներով հետապնդեն իրանց ծրագիրը։

Թիւրքիայում, սակայն, հակառակ նորագոյն սահմանադրական իրաւունքի սկզբունքներին, ընկերակցութիւնների ազատութիւնը կաշկանդված է։ Մի կուսակցութիւն միայն ազատ քաղաքացիութեան իրաւունք ունի, այդ էլ «Իթթիհատ վէ Թէրագգը» կուսակցութիւնն է։

Ժողովների, Միտինգների ազատութիւնը.— Սա

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 11:11 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

էլ քաղաքական ազատութեան էական պայմաններից մէկն է։ Քաղաքացիները պէտք է հաւաքուին և ժողովների ազատութիւն ունենան, որպէսզի կարենան իրանց կարծիքները տարածել ամենուրեք և և պաշտպանել իրանց շահերը։ Կառավարութեան գործ դրած ճնշումները ժողովների դէմ, խօսքի ազատութեան բռնաբարումը կը լինի։ Շատ երկիրներում այժմ արգիլած են հրապարակային միտինգները, փողոցային հաւաքումները, բայց դա ռամկավարական սկզբունքներին բոլորովին հակառակ է։ այդ տեսակէտից Անգլիան և Միացեալ-Նահանգները խիստ գովելի են. այնտեղ կառավարութիւնը ոչ մի արգելք չի դնում բացօդեայ միտինգների համար։

Թիւրքիայում միտինգների ազատութեան մասին խօսելը ուղղակի հեգնական է։

Խղճի ազատութիւնը.— Սա ամենաբնական ու էական ազատութիւններից մէկն է։ Որքան հայածանք, կոտորած եղել է կրօնի անունով, սկսած Հռովմէական կայսրութեան օրերից մինչև այսօր։ Միլիոններով կը հաշուեն այն բոլոր զոհերի թիւը, որոնք նահատակուել են կաթոլիկ եկեղեցու հաւատաքննութեան շնորհիւ, ինչպէս և մահմէդական մոլեռանդութեան պատճառով։ Բացի այդ, որքան ցեղեր, ժողովրդներ ու անհատներ զրկուել են քաղաքական, քաղաքացիական ազատութիւններից լոկ նրա համար, որ ընդունուած պետական, պաշտօնական կրօնը չեն դաւանել։

Կրօնական ազատութիւնը հռչակուեցաւ Ֆրանսիական յեղափոխութեան ժամանակ, որպէս մարդու և քաղաքացու անձեռնմխելի իրաւունքներից մէկը։ 1791-ի սահմանադրութիւնը յայտարարեց,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 11:11 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

որ «Ամեն ոք ազատ է իր կրոնական կարծիքների համար»։ Այնուհետև բոլոր սահմանադրությունները ընդունեցին այդ սկզբունքը։

Նորագոյն սահմանադրական իրաւունքը կրոնը նկատում է որպէս անհատական խղճի գործ։ Պետութիւնը, համաձայն այդ սկզբունքի, ոչ մի իրաւունք չունի միջամտելու կրոնական խնդիրների մէջ։ Եկեղեցին պէտք է լիովին անջատ լինի պետութիւնից և իր գոյութեան միջոցները ապահովէ միմիայն հաւատացեալների հայթայթած օժանդակութեամբ։ Գոյութիւն ունեցող դաւանութիւնները հաւասարապէս պէտք է ազատ լինեն և պետութիւնը չպէտք է իր եւմուտքից նիւթական նպաստ հայթայթէ նրանց։ Նա ով որ հաւատում է, ազատ է իր կրոնական կարծիքների մէջ և կարող է բարոյապէս ու նիւթապէս օժանդակել եկեղեցուն։ Իւրաքանչիւր դաւանութիւն, ուրեմն, կախուած պէտք է լինի իր ծխից։

Եկեղեցու և պետութեան բաժանման սկզբունքը ներկայումս մեծ յառաջադիմութիւն է անում։ Միացեալ-Նահանգներում նա երկար ժամանակից ի վեր արդէն գործադրուած է. Ֆրանսիայում նա կիրարկուեցաւ 1905ին և կամաց-կամաց միւս երկիրներն էլ հետևելու են սրանց օրինակին։

Պարզելով նորագոյն սահմանադրական իրաւունքի մի շարք սկզբունքները և հրաւիրելով ընթերցող հասարակութեան ուշադրութիւնը այդ սկզբունքների վրայ, մանրամասն ուսումնասիրութեան նիւթ դարձնելով նրանց, մենք՝ վերջացնելուց առաջ՝ կարևոր ենք համարում շեշտել մի ան-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 11:17 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

վիճելի ճշմարտութիւն, այն, որ մի երկրում ձեռք բերուած սահմանադրութիւնը այնքան կեանք կարող է ունենալ և յարատևել, որքան նոյն երկրի ժողովուրդը գիտակցութիւն ունի նրա մասին, և օգտուում է նրա տուած բարիքներից. այլապէս, առանց այդ անհրաժեշտ կանխապայմանի, սահմանադրութիւնը ուշ կամ կանուխ դատապարտուած է մեռնելու և կամ թղթի վրայ միայն ապրելու, առանց կեանքի մէջ գործնական արդիւնքներ տալու։ Որպէսզի սահմանադրութիւնը ապրի և զարգանայ, հարկաւոր է որ նա հասարակական լայն խաւերի սեփականութիւնը դառնայ, որ ժողովուրդը քաղաքական ազատութիւններին տայ կենսական նշանակութիւն, իբրև անմիջական անհրաժեշտութիւն, հացի եւ ղոյսի չափ։ Երբ քաղաքական-քաղաքացիական ազատութեան գաղափարը խոր արմատներ կը ձգէ ժողովրդական հոծ զանգուածների մէջ, երբ ռազմակավարական ազատ բարքերը աւանդական կերպով ներմուծուեն, թափանցեն երկրի ամենահեռաւոր անկիւններն անգամ, այն ժամանակ արդէն վստահօրէն կարելի է ասել, որ սահմանադրական դրութիւնը կապրի ու կը զարգանայ ճշմարիտ ու կատարեալ ժողովրդապետութեան հիմունքներով, երաշխաւորելով իսկական ազատութեան, հաւասարութեան ու եղբայրութեան դարաշրջանի պանծալի յաղթանակը։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 11:17 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Generated on 2016-07-15 11:17 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

Generated on 2016-07-15 12:18 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

Generated on 2016-07-15 12:18 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

SAINT JAMES ARMENIAN LIBRARY
3200 W. Adams Blvd.
Los Angeles 18, Calif.

Digitized by Google
Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

Generated on 2016-07-15 12:18 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google